

2-3(605-606)  
15.02.2021  
Յրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

# ԼՍԱՐ

Ճանաչել զիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## Ո՞ր Թե շե՛ս նա՞նել, ԱՅՆ նա՞նել մոս՞ջ

Արցախյան երկրորդ պատերազմը տարածքային ու մարդկային թանկ կորուստներ բերեց Արցախին: Սա, անշուշտ, ճակատագրական նշանակություն ունի արցախահայության գոյաբանական խնդիրների համատեքստում: Մենք ունենք լուրջ մարտահրավերներ թե՛ արտաքին քաղաքական հարթությունում և թե՛ երկրի ներքին կյանքի վերականգնման ուղղությամբ: Դրանց լուծումը մեծ չափով կախված է արտաքին գործընկերից, հատկապես ռուսական խաղաղարար համակարգի հետ ճիշտ հարաբերություններ կառուցելու առումով: Եթե մինչև սեպտեմբերի 27-ը Արցախի Հանրապետությունը բանակցելու հզոր կռվաններ ուներ՝ իր գիտական ուժերով ազատագրած տարածքներ, ՀՀ-ին վերապահված անվտանգային կայուն երաշխիքներ, շատ թե քիչ կենսունակ գործող ԵԱՀԿ Մինսկի խումբ, ապա այդ բոլորը հիմա ամբողջական կամ մասնակի վերացել են: Հայաստանն Արցախի անվտանգության «բանալին» փաստացի հանձնել է ռուսներին, որոնց ներկայության իրավական հիմքերը տարածաշրջանում բավականին խախտու են: Ադրբեյջանը ոչ միայն ստացել է իր ակնկալած 5+2-ը, այլև օկուպացրել է Արցախի Հանրապետության տարածքի մի գալի մասը: Նման պայմաններում բազմակի դժվարացել է Արցախի հիմնահարցը կրկին բանակցային լուծման հուն վերադարձնելը:

Այդո՞ք սա նշանակում է վերադարձ ի շրջանս յուր: Մոտավորապես այսպիսի ծանր կացություն մենք ապրել ենք միայն դարի 90-ականների սկզբին, երբ Արցախը գտնվում էր խուլ շրջափակման մեջ՝ մինչև ատամները զինված ազերական հրոսակախմբերին դեմ հանդիման: Այն ժամանակ մեր միակ ուժը ժողովրդի միասնությունն էր՝ փետրվարյան զարթոնքի գաղափարով ամրապնդված: Այդ միասնականությունը մեզ օգնեց ի վերջո ճեղքել պաշարման հրե օղակը: Եվ դեռ ավելին՝ կարողացանք Արցախի շուրջը անվտանգության գոտի ձևավորել, որը շուրջ քառորդ դար անխաթար մնաց:

Պատերազմները միշտ ավեր ու կորուստներ են բերում հատկապես փոքր ազգերին: Մենք դա սեփական դառն փորձով գիտենք: Իսկ գոյաբանական խնդիրը ենթադրում է պաշտպանվելու մշտական կարողություն. ունեի՞նք այդ կարողությունը: Բացասական պատասխանի բովանդակության մեջ կարելի է շատ պատճառներ թվարկել, որոնք պարտավոր էինք ժամանակին առաջնակարգել: Բացթողումների թվում ամենակարևորը, թերևս, Փետրվարի պատգամներից մեր հեռանալն էր: Այն սերունդը, որը հեղինակեց Արցախյան մեծ շարժումը, չկարողացավ գոյապայքարի էստաֆետը ժամանակին ու պատշաճ փոխանցել հաջորդ սերնդին: Սա է իրական փաստը, որն ուզենք թե չուզենք՝ պիտի ընդունենք: Բայց ընդունել թերացումը՝ չի նշանակում համակերպվել դրան. մենք հետ մայելու ժամանակ և իրավունք չունենք, պիտի նայենք առաջ՝ ձեռքում ունենալով փետրվարյան դրոշը: Այդ դրոշի գույները բնավ չեն խամրել, միաբանության գաղափարները չեն ժամկետանցվել, իսկ նորօրյա սերունդն էլ, հանձնված ենք, ոնչով չի գիջում իրենից ավագին:

Վերադառնանք 1988-ի մեր միասնականությանը, հավատին ու վստահությանը, համուղղենք մեր ընկալումների ներքնատար ընթացքը, որն անպայման մեզ նորանոր հաղթանակների կտանի:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## «ԱՐՄԱԹ»-Ը ՆՈՐ ԱՐՄԱՏՆԵՐ Է ՁԳՈՒՄ



Փետրվարի 10-ին Արցախի Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ դպրոցում Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության և ԿԳՄՍ Մախարաբյան համատեղ ջանքերով տեղի ունեցավ «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի բացումը:

Արցախի կրթական համակարգում Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության առաքելությունը միտված է տեխնիկական կրթության բազայի հզորացմանը, ինչպես նաև մեր փոքրիկ հայրենիքը

բարձրորակ մասնագիտական աշխատուժով ապահովելուն:

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ծրագրերի համակարգող Սեդրակ Վարդանյանը, կարևորելով դպրոցներում նորարարական լաբորատորիաների դերը ՏՏ ոլորտի զարգացման և երեխաների մասնագիտական կողմնորոշման գործընթացում, նշեց, որ դա մեծ ու իրական հնարավորություն է գյուղական բնակավայրերում արդիական ծրագրեր կյանքի կոչելու գործում:

ԱՅ ԿԳՄՍ Մախարաբյան Լ. Դարախանյանի խոսքով՝ բնագիտական առարկաներին

առաջնահերթություն տալը մեր ժամանակների հրամայականն է: Նախարարն աշակերտներին կոչ արեց բաց չթողնել ընձեռնված հնարավորությունը և ստացած տեխնոլոգիական գիտելիքներն օգտագործել ի շահ սեփական բնակավայրերի շենսցան և հզոր երկրի կառուցման:

Նշեց, որ մինչև պատերազմն Արցախում գործում էին 32 «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ, որոնցից 11-ը պատերազմի հետևանքով մնացել են Ադրբեյջանի վերահսկողության ներքո:

### Ճանեա գրեց

## ՄԵՔ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆՔ ՓՐԵԼ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ԱՅ ԿԳՄՍ Մախարաբյան Լուսինե Դարախանյանը այցելություններ է կատարում պատերազմում զոհված, անհետ կորած, գերեզարկված ուսուցիչների և դպրոցի մյուս աշխատողների տները:

Այս և երկրի առկա վիճակի մասին իր մտորումներով նա կիսվեց «Լուսարար»-ի հետ:

«Նրանց ընտանիքները մեր միջաբարանքի, բարոյական, ինչ-չու չէ՛ մյուսական աջակցության կարիքն ունեն: Մշտապես դպրությունն ու մտավորականությունն են եղել մեր ինքնակազմակերպման ինստիտուտը: Մենք պետք է հաղթահարենք այս դժվարությունները: Պատմությունից հիշում են, որ 641թ., երբ արաբական արշավանքի ժամանակ Դիլինը հիմնահատակ ավերվել էր, և 30 հազար հայ էր թաղվել, ասում էին, որ Հայաստանը գերեզմանոցի է վերածվել, որը շատ նման է մեր այս ժամանակաշրջանին: Բայց, այնուամենայնիվ, ապագայի տեսիլը փրկել է մարդկանց: Այս պատերազմում մեր 5000 զոհերն արդեն տալիս են տեսիլք և պատգամներ: Մենք իրավունք չունենք

րող ենք փրկել այն, ինչ այս պահին ունենք: Հավաքականության մեջ պետք է ամփոփվի մեր բարոյական և ինտելեկտուալ ներուժը: «Ճանեա գրեց». ուզում եմ բուրյա կրկնեմք այս միտքը, գտնենք մեր մարդկային և հոգևոր ընթացումի բոլոր լավ պաշարները, որպեսզի կարողանանք համակարգն առաջ տանել: Ես այն կարծիքին եմ, որ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի մեր ոլորտն այն համակարգն է, որը ձևավորում է երկրի բարոյական կլիման: Կոչ եմ անում բոլոր ուսուցիչներին միավորվել, համախմբվել՝ այս ցավն ու նեղությունը միասին հաղթահարելու համար:

Մենք կայցելենք նաև սահմանափակ գյուղերի ուսուցիչներին, մայրաքաղաքի մանկավարժական կոլեկտիվներին, կվերլուծենք՝ ինչ է կատարվում, կիստակցենք մեր անելիքները, ու որ շատ կարևոր է՝ նպատակները: Բոլոր այն հասարակությունները, որոնք այսպիսի ծանր կացությունից հետո ճանապարհային հստակ քարտեզ, նպատակներ չեն ունենում, դատապարտվում են տարալուծման, դեգրադացման: Խոսքը նաև բարոյական և ինտելեկտուալ դեգրադացման մասին է: Հեռուստատեսությամբ ուսուցչունիքն էլ ունենում ու ասում, որ դասարանում խոսում է

դավաճանությունների մասին: Անթույլատրելի է, երբ ուսուցիչները սոցիալական ցանցերում հանդես են գալիս պառակտող, բացասական մտքեր գեներացնող հեղինակների դերում: Երեխաների մաքուր հոգին չի կարելի ապակնել: Եթե որևէ մեկի կողմից դավաճանություն է եղել, դա հետագայում պետք է վերլուծվի և մտցվի դասագիրք: Բայց այս օրերին կրթության համակարգը քաղաքականացնելն արգելվում է: Ուսուցչությունն է, որ այս պայմաններում կարող է փոխել մարդկանց մտածողությունը, ազդել նրանց նպատակների ու համոզումների ձևավորման վրա: Ուսուցիչը պետք է մնա իր բարձրության վրա և երջանիկ մարտակոչ սկսի, որովհետև պատմությունը շարունակում է գրվել, և սերունդները գնահատելու են նաև մեր այս ընթացքը՝ ինչպես ենք մենք կարողանում վերագտնել մեզ այսպիսի ծանր իրավիճակում: Լավ աշխատել՝ նշանակում է ծառայել: Իսկ եթե հայրենիքին ենք ծառայում, ծառայում ենք Աստծուն, այսօրվա՞ն սա իրականում առաքելական աշխատանք է: Բոլորը կարող են տեր կանգնել հաղթանակներին, պարտությանը քշերն են կարող տիրություն անել ու նախանշել գալիք հաղթանակի ուրվապատկերը:

## ՈՒՐՈՏԻ ՄՊԱՍԿՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատերազմից հետո ԱՅ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի մախարաբյանը նոր մոտեցումներ է որդեգրել, ռազմավարության մեջ փոփոխություններ կատարել: Թե ինչպիսի, ներկայացնում է մախարար Լ. Դարախանյանը:

Նախարարությունը «Ես» կրթական հիմնադրամի հետ նորից սկսում է աշխատանքը, որի նպատակն է գյուղական բնակավայրերում երիտասարդների անբուսայնություն, աշակերտների հետաքրքրության խթանում հիմնարար առարկաների նկատմամբ, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ աշակերտներին նորարարական գաղափարների մատուցում, գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացում: Այդ ծրագրի միջոցով աշակերտը ոչ միայն ինքնակրթվում է, համացանցում իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը գտնում, այլև կարողանում է ճիշտ օգտագործել ձեռքի տակ եղած գրականությունը, տրամաբանել, վերլուծել, թիմային աշխատանքի հմտություններ ձեռք բերել, հաղորդակից լինել տեղեկատվական տեխնոլոգիաների՝ աշխարհում տե-

ղի ունեցող նորություններին: Եթե նախկինում Մարտունու շրջանի Մուշկապատ, Հաղորտի, Գիշի, Խնուշիցակ համայնքներում էր իրականացվում այդ ծրագիրը, ապա կընդգրկվեն նաև շրջանի ճարտար, Քերթ, Մաճկալաչեն, Կարմիր շուկա, Թաղավարդ և այլ գյուղեր: Նախատեսվել են տեխնոպարկի հիմնում նաև Ստեփանակերտում, ուր կհաճախեն հիմնական և միջնակարգ դպրոցների երեխաները: Տեխնոպարկը շատ թանկ ծրագիր է, մախարարությունը դա իրականացնելու է գործընկերների ու հովանավորների աջակցությամբ:

ՈԱՋՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

ԻՆՏԵՆՏԻՎԱՆ ՄԻՏՔԸ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Ե ԴՊՐՈՑՈՒՄ

Արցախում կրկին թափ են առել «Արմաթ» լաբորատորիաների ստեղծման աշխատանքները: Հայաստանի առաջատար ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) պատվիրակությունը ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանի մասնակցությամբ փետրվարի 10-ին Մարտակերտի



շրջանի Վաղուհաս գյուղում բացեց Արցախում հերթական «Արմաթ»-ը: Նախորդ օրը ԱՏՁՄ պատասխանատուները Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցում հիշատակի հավերժացման արարողություն էին կատարել: Լաբորատորիան անվանակոչվեց պատերազմում զոհված խմբակավար Ալբերտ Ծատրյանի անունով: Ներկա էին մահատակի հարազատները, ընկերները, ուսուցիչները:

Միջոցառմանը ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանն ասաց. «Զգիտե՛ք նորախ լինե՛ք, թե տխուր, որ մեր հերոսական կերպարները շատանում են: Այդ կերպարներից մեկն էլ Ալբերտն է, որն իր կարծ կենսագրությամբ պատմության իր էջը գրեց մեր մեծ պատմության մեջ: Ալբերտի ու նրա մտանքների վարքագծով առարկայացավ իսկական հայրենասիրությունը: Նրանք մեզ մղում են իրական շրջափոխման: Այս օրով ու այս իրարարձությամբ խնորհե՛ք մեր վաղվա օրը»:

Ալբերտը Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի առաջին խմբակավարներից էր: Նա շատ թիմեր է պատրաստել, որոնք մրցույթներում առաջնակարգ տեղեր են գրավել: Ղեկավարում էր մեկ տարի առաջ հարազատ կրթության բացված «Արմաթ» լաբորատորիան և իր գիտելիքները սիրով փոխանցում այնտեղ հաճախող երեխաներին: Նրան ծանաչողներն Ալբերտի նախ և առաջ այս հատկանիշներն ընդգծեցին. համեստ, կարգապահ, բարյացակամ, իր գործի մկրդյալ: Դպրոցի տնօրեն Լենա Ավանեսյանի բնութագրմամբ՝ նա սովորական տղա էր, ինչպես մեր բոլոր տղաները, դպրոցում աչքի չընկնող, բայց հայրենիքի վտանգի պահին՝ հերոսացող: Փոխտնօրեն Իրինա Մկրտչյանի համար Ալբերտը ոչ միայն աշակերտ էր, այլև ուսուցիչ, քանի որ այն տարիներին նա էր համակարգչային գիտելիքների մեր տիրապետող ուսուցիչներին հմտություններ սովորեցնում:

ԱՏՁՄ պատվիրակության անդամները կարևորեցին դպրոցական տարիքից սովորողների մոտ ինժեներական գիտելիքների արմատավորումը: Կազմակերպության երջանկահիշատակ ղեկավար Կարեն Վարդանյանը կանխատեսում էր, որ ժամանակակից պատերազմում կռվելու է ԱՅՍ-ների բանակը և կոչ էր անում աշխատել այդ ուղղությամբ: 44-օրյա մեր մղած պատերազմն ապացուցեց դա:

Իսախանյանի Կարեն Վարդանյանի կանխանշած ուղղությունները, ցավոք, լիարժեք չեն իրականացվել. բայց, կարծում են, սկսելով կրթությունից, իսկ կրթություն՝ չի նշանակում միայն գրքեր կարդալ կամ ուսուցչի ասածները կրկնել, այլ կարողանալ ձեռքբերով, ուղեղով աշխատել, կիսանենք մեր նպատակին: «Արմաթ» լաբերը միտված են հենց այն բանին, որ այնպիսի սերունդ կրթե՛նք, որ յուրաքանչյուրը կարողանա ամեն տեսակի մարտահրավերներ հաղթահարել: Դրա մեջ մտնում է նաև ԱՅՍ-ներին տիրապետելը, որովհետև դա ոչ միայն ռազմական նշանակություն ունի, այլև տնտեսական: Դրա համար պետք է կարողանանք յուրաքանչյուր քաղաք և գյուղ հասցնել այդ աջակցությունը և զարգացման գործիքները:



Ամենասկզբում «Արմաթ» լաբորատորիաները մասնավոր սեկտորի ֆինանսավորմամբ էին իրականացվում, բայց արդեն մի քանի տարի է, աշխատում ենք թե՛ ՀՀ և թե՛ Արցախի կառավարությունների հետ համատեղ:



Սեդրակ ՎԱՐԴԱՆՅԱՆ, «Արմաթ» լաբորատորիաների ծրագրերի ղեկավար

- Տարիներ շարունակ մենք պետք է ամեն ինչ անե՛նք, որ այսօր հաղթանակ ունենայինք: Իսկ հաղթանակը գալիս է ոչ միայն պատերազմում, այլև գիտության մեջ, սպորտում, մշակույթում... Հիմա պետք է ամեն ինչ անենք, որ մեր հերոսները չլինեն խրամատներում գտնվողները, այլ լինեն ինժեներները, գիտնականները, որովհետև նրանք կարող են հազարավոր կյանքեր փրկել իրենց նորամուծություններով, գիտելիքի ուժով: Իսկ որ Արցախն ունի այդ ներուժը, փաստ է: Փոքրիկ Ծմակահող գյուղում է ծնվել ԽՍՀՄ հրթիռաչինության, մեխանիկայի և հաշվողական տեխնիկայի կարկառուն ներկայացուցիչ Անդրանիկ Իսախանյանը, որն առաջ է տարել գիտության այդ ճյուղերը ու նաև շատ բան արել իր գյուղի համար: Արցախի հողը ծնել է բազմաթիվ գիտնականներ, որոնց իրենց ներուժը ներդրել են ընդհանուր կամ այլ երկրների հզորացմանը: Այսօր էլ կա այդ ներուժը, և սպասում ենք, որ նաև մատաղ սերնդից պիտի աճեն նման գիտնականներ ու իրենց կարողություններն ուղղեն սեփական երկրի անվտանգությանն ու հզորությանը: «Արմաթ» լաբորատորիաները նպաստում են հենց այդպիսի սերնդի ձևավորմանը:

Երեխաները դասերից հետո կարող են գալ և լրացուցիչ բարձր տեխնոլոգիական կրթություն ստանալ: Դրա շնորհիվ նրանք և՛ կհզորացնեն մեր երկիրը, և՛ կապահովեն սեփական բարեկեցությունը: Սա այն ուղի է, որ կարող են գումարներ վաստակել առանց իրենց բնակավայրից մշտապես հեռանալու: Որովհետև այդպիսի հնարավորություններ տեղեկատվական տեխնոլոգիաները տալիս են:

Պատերազմը մեկ անգամ ևս հաստատեց, որ մեր առաջնակարգ խնդիրն ինժեներների, գիտնականների, ծրագրավորողների մեծ բանակի ստեղծումն է, որը ոչ միայն կխթանի մեր տնտեսության զարգացման խնդիրների լուծմանը, այլև կօգնի մեր երկրի անվտանգության ապահովմանը, և կունենանք ոչ թե՛ 20-րդ դարի, այլ ավելի առաջադեմ բանակ, քան թշնամին ունի:

Խաչիկ ՆԱԶԱՐՅԱՆ, ԱՏՁՄ վարչության անդամ, VMare ընկերության ինժեներական տնօրեն, «Արմաթ» լաբորատորիաների հովանավոր

- Մենք հատուկ մտոցում ունենք «Արմաթ»-ի նկատմամբ, քանի որ այսօր ինժեներական արդյունաբերության ամենակարևոր խնդիրը կադրերի հարցն է: Իսկ կադրերի պատրաստումն անպայման պետք է սկսել դպրոցից, և բոլորը պետք է աջակցեն: Սպասել, որ պետությունն իր կրթական համակարգով կհասցնի մեր հետևից գալ, իրական չէ: Հովանավորելով «Արմաթ»-ը՝ մենք մեզ համար աշխատողներ ենք պատրաստում: Աշխարհն արագ է զարգանում, մենք իրավունք չունենք սպասել, թե երբ են երեխաները դպրոցն ավարտում: Դա նշանակում է ստեղծել մի միջավայր, որտեղ կլինեն ՏՏ գործող ձեռնարկություններ, կլինի միջին մասնագիտական կրթական հաստատության կարգավիճակով իրական դպրոց: Դա նաև կլինի ստարտափ ընկերությունների համար բարենպաստ գործունեության վայր, ասել է թե՛ մեր աշխատատեղեր:



ԱՏՁՄ պատվիրակությունը եղել է նաև Ստեփանակերտի հ. 3 դպրոցում, որտեղ ավելի լավ պայմաններ են ստեղծվել այդտեղ տեղադրված «Արմաթ»-ի համար: Իսկ մոտ ապագայում դրան կից մեր լաբորատորիա կստեղծվի, որի հետ մեծ ծրագրեր են նախանշվում. այդտեղ հաճախող երեխաները մինչև բանակ զորակոչվելը կտիրապետեն անվտանգությունն ապահովող ժամանակակից տեխնիկական սարքավորումներին: Ապագային միտված ևս մի քանի ծրագրեր ունեն, որոնցից է Արցախում տեխնոպարկի ստեղծումը: Դա նշանակում է ստեղծել մի միջավայր, որտեղ կլինեն ՏՏ գործող ձեռնարկություններ, կլինի միջին մասնագիտական կրթական հաստատության կարգավիճակով իրական դպրոց: Դա նաև կլինի ստարտափ ընկերությունների համար բարենպաստ գործունեության վայր, ասել է թե՛ մեր աշխատատեղեր:

Ս. ՆԱԶԱՐՅԱՆ

ՈՒՐՈՏԻ ՄՊԱՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

1 Անձամբ ես անհատական աշխատանք եմ տանելու աշակերտների հետ, որպեսզի նրանք բարձրագույն կրթությունն այդ ուղղությամբ շարունակեն վարկանիշային համալսարաններում:

Մենք կտարածենք «Արմաթ»-ների ցանցը: Ծրագրում ենք Արցախի բոլոր դպրոցներում ունենալ «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ: Մենք ունեցանք մեծ կորուստներ նաև այս ուղիով. թշնամու վերահսկողության տակ գտնվող բնակավայրերի դպրոցներում թողել ենք լաբորատորիաներ:

«Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամի միջոցով նախատեսում ենք բնագիտական կաբինետի բացում:

Ամենասպասված ծրագիրը երկարօրյա կրթության կազմակերպումն է: Պիլոտային սկսելու ենք գյուղական խոշոր համայնքներից, այնուհետև բերելու ենք Ստեփանակերտ: Դա կլինի նաև որպես աշխատատեղ ուսուցիչների համար: Երկարօրյա կրթության կազմակերպման ծրագրում ընդգրկելու ենք հիմնականում տեղահանված ուսուցիչներին:

Օրակարգում է ուսուցիչների 22 ժամ դրույքաչափը 18 ժամ դարձնելու ծրագիրը: Առաջիկայում առաջարկությունը կներկայացնենք ԱՀ նախագահին:

Սկսում ենք քույր դպրոցների ծրագիրը: Արցախի դպրոցներն ամուր կապեր են ստեղծելու սփյուռքի հայկական վարժարանների հետ:

Նախարարությունը քայլեր է ձեռնարկել մեր ոլորտի շահառուների համար հովանավորչական միջոցներով հոգեբանական-վերականգնողական աշխատանքների ուղղությամբ: Մարտի 1-ից «Օրանթ Էլեֆանտ» հոգեբանական կենտրոնը սկսելու է աշխատել նախադպրոցական տարիքի և դպրոցահասակ այն երեխաների հետ, ովքեր ունեն հոգեբանական խնդիրներ:

Սկսում ենք նաև հոգեբանական վերականգնման մեծ ծրագիր դաստիարակների և ուսուցիչների համար, որոնց շահառուները լինելու են նրանք, ովքեր կցանկանան հոգեբանական խորհրդատվություն ստանալ: Նրանք կտիրապետեն այնպիսի մեթոդիկաների, որոնցով հնարավոր կլինի ոչ միայն հաղթահարել սեփական խնդիրները, որ ծագել են պատերազմի հետ կապված, այլ նաև նկատել հոգեբանական խնդիրներ ու աջակցության կարիք ունեցող աշակերտներին և նախնական աշխատանք տանել նրանց հետ: Ընդգրկվելու են նաև շրջանները: Բոլորս շոկային վիճակում ենք և հոգեբանական աջակցության կարիք ունենք: Մեկ միջոցառում արդեն կազմակերպվել է Ստեփանակերտում՝ մանկապարտեզի դաստիարակների և հոգեբանների համար երկօրյա հոգեբանական թրեյնինգ:

Ընդարձակել ենք հոգեբանների և հատուկ մանկավարժների կարգերի ֆոնդը: Ստեփանակերտում խնդիրը լուծված է, բայց շրջաններում այդ մասնագետները չկան: Երկրորդ փուլով սկսելու ենք նյութատեխնիկական բազայի համալրումը:

Այս տարի վերապատրաստումներ ենք ծրագրում հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար, կիրավիրենք նաև կրթության փորձագետների՝ ընդհանուր քննարկումների և ռեսուրսի համար, որովհետև այս պատերազմն իրոք անդասագիրք դպրոց էր, որը լրջորեն խորհելու տեղիք է տալիս:

Առաջիկայում մեթոդապես կզինվեն Արցախի բոլոր մանկապարտեզները: Նրանք կստանան թեմատիկ-մեթոդական գրականություն, նյութեր, դասընթացներին համահունչ կազմած ալբոմներ նախադպրոցական կրթությունը լիարժեք կազմակերպելու նպատակով:

Առաջիկայում նախատեսում ենք Ազգային ժողով տանել «Նախադպրոցական կրթության մասին» և «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքների նախագծերը, որով շատ հարցերի պատասխաններ ենք գտնելու:

Ամվճար ուսուցման համար պետության աջակցությունից չօգտվող ուսանողներին կրթաթոշակի տրամադրման հարցով կդիմենք Հայ կրթական հիմնադրամին: Մանկապարտեզները գույքով համալրման հարցում մեզ այս պահին օգնում են Հայ օգնության ֆոնդը, «Ավորդա» մարդասիրական հիմնադրամը:

Փետրվարի վերջին Երևանում նախատեսվում է բարեգործական ճաշկերույթ, որը մկրված է լինելու Արցախի ԿԳՄՍ համակարգի հետպատերազմյան խնդիրների լուծմանը: Այնտեղ ներկայացնելու ենք կրթական բոլոր հաստատությունների խնդիրները:

Բուհական կրթության ծրագրերն օտարերկրյա հաստատություններում բացառապես լինելու են տեխնիկական և բնագիտական ուղղություններով:

Շարունակելու ենք Արցախի բնակավայրեր ուսուցիչների ուղեգրման ծրագիրը: Դրա արդյունավետության բարձրացման համար փոփոխություններ ենք կատարել գործող կարգում. գործուղված ուսուցիչների բնակավայրի և աշխատավայրի 50 տոկոսի չափի հավելավճարին կզուսմարվեն նաև նրանց տրանսպորտային ծախսերը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԴԵՊՈ ԱՆՍԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹՅԱՐ ԵՂԻՑԻ...



Կան անհատներ, որոնք երբ կողքիդ են և նվիրումով, զուսպ ու համբերատար, առանց թմբկահարելու շարունակում են իրենց գործունեությունը, դու մի տեսակ այնքան հանգիստ ես, այնքան ապահով. չէ՞ որ նրանք կան, ապրում են և արարում: Ու երբ նրանք մի օր հանկարծ հեռանում են, նոր ես զգում այն ծանր, անդառնալի և անչափելի կորուստը, թիկունքիդ խոր անդունդը, որն այլևս չի լցվելու: Նոր ես զգում, որ, նրանց հեռանալով գունազրկվում ես նաև դու, իսկ շուրջդ դատարկություն է: Արմեն Դուլխանյանը այդ անհատներից էր...

Արմեն Բորիսի Դուլխանյանը ծնվել է 1983 թվականի փետրվարի 15-ին Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգ կրթություն ստացել է սկզբնապես հ. 3, ապա հ. 7 միջնակարգ դպրոցներում: 2000 թվականին ընդունվել է ԱրԴՀ «Նախնական զինվորական պատրաստություն և ֆիզիկական պատրաստություն» բաժինը և գերազանցությամբ ավարտել այն: 2001-2003 թթ. պարտադիր զինվորական ծառայություն է անցել ՊԲ շարքերում, որտեղ էլ առաջին անգամ գործնականորեն ծանոթացել է այն զենքերի տեսակներին, որոնք իրենց պատանեկության սև դրոշմն են թողել նրա հիշողության մեջ: Հետագայում՝ ընկերական ջերմ միջավայրում քննարկումների ժամանակ նա պիտի խոստովաներ, որ հենց ժամկետային ծառայության տարիները դարձան իր համար կյանքի կարևոր դպրոց, և որ բոլոր տղաներն անպայմանորեն պիտի անցնեն կյանքի այդ քննությունը:

Արմեն Դուլխանյանը լուրջ մտադրություններ ուներ նաև գիտական ուսումնասիրությունների միջոցով պարզաբանելու ռազմական արվեստի հիմնախնդիրներին առնչվող խնդրահարույց կողմերը՝ բացահայտելու լուսաբանման ենթակա բազմաթիվ հիմնահարցեր, ինչն էլ նրան 2006-2009 թթ. ուղղորդեց ասպիրանտուրական կրթության: Սակայն հետբուհական կրթությունը իր ակադեմիական տեսական գործառնությամբ չհրապուրեց երիտասարդ մտավորականին, և շուտով նա որոշեց իր աշխատասիրության, նպատակասլացության արդյունքում ամբարած գիտելիքները վերածել գործնական կիրառելիության: Հայրենիքի պաշտպաններ կրթելու վեհ առաքելության գիտակցումով՝ 2007-2013 թթ., մանկավարժական առաջին քայլերը Արմեն Դուլխանյանին հասցրել են սկզբում մայրաքաղաքի հ. 12 միջնակարգ, ապա հ. 8 ավագ դպրոցներ՝ որպես զինղեկ, իսկ 2013 թվականից մինչև անմահանալն իր աշխատանքային գործունեությունը շարունակել է հ. 11 ավագ դպրոցում: Ինչպես հետագայում պիտի

խոստովաներ խորագիտակ ուսուցիչը, «Մասնագիտական ինքնահաստատման ճանապարհին այս դպրոցն ինձ համար հիմք դրեց ստեղծագործականության մի նոր ժամանակափուլի, որտեղ հաջողությունը ուղեկցում էր դեպի հաղթանակներ»: Եվ չխալվեց Արմենը. տարիների փորձառությունը ի նպաստ դնելով սերունդների կրթության և դաստիարակության գործում՝ նա յուրաքանչյուր թողարկվող սերնդի հետ իր բաժին մասնիկն էր ճանապարհում՝ հայրենիքին տալով բանակի և ռազմարվեստի հանդեպ առանձնակի պատասխանատու վերաբերմունք ունեցող հայրենապաշտ և անձնվեր սերունդներ, իրենց ընտրած մասնագիտական ոլորտների որակյալ կադրեր:

Ուսուցիչ Դուլխանյանի մանկավարժամասնագիտական կարողություններն ուղղված էին գործնական փորձարարական կողմնորոշվածությանը: Նա լավ էր պատկերացնում այն ծանրակշիռ աշխատանքը, որ դրված է նախնական զինվորական պատրաստության դասընթացներն ավելի կիրառական ու նպատակային դարձնելու հիմքում, մասնավորապես, տեսական և գործնական պատրաստու-



թյան միջոցով իրականացնել սովորողների շարային և հրաձգային պատրաստությունը, սովորողներին զինել անհրաժեշտ ռազմական գիտելիքներով, ապահովել մարտավարության և քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի հիմունքների յուրացումը, սովորողների մոտ ձևավորել ռազմակիրառական կարողություններ, հմտություններ, կամային բարձր հատկանիշներ:

Դպրոցի առօրյան սկսվում էր ընկեր Դուլխանյանի ավանդական հրահանգներով, շարային, վազքի, դիպուկահարման, նոնակի նետման դասերով: Նրա սաների մեջ կան սպայական կրթություն ստացած պարմանի-պարմանուհիներ, որոնք հաջողությամբ ուսումն ավարտելուց հետո ծառայության են անցել Պաշտպանության բանակի շարքերում, ովքեր իրենց ուսուցչից ժառանգած մեծ պատգամ ունեն՝ նվիրումով ու պատասխանատվության մեծ զգացումով կրել սպայական համազգեստը:

Այսօր հ. 11 ավագ դպրոցի միջանցքները զարդարում են ճանաչված ուսուցիչ Ա.Դուլխանյանի սաների հաջողությունները խորհրդանշող պատվոգրերը, դիպ-

լոմներն ու զավաթները, որոնք բերվել են մարզային և հանրապետական օլիմպիականներից, հանրապետությունում անցկացվող տարբեր պատանեկան մրցաշարերից: Հատկանշական է, որ ՀՀ կազմակերպվող ամենամյա «Արծվիկ», «Կորյուն» ռազմամարզական ստուգատեսներին մասնակցելով և պատվավոր տեղեր զբաղեցնելով՝ դպրոցի թիմը տարիներ շարունակ առաջատար է ճանաչվել: Բոլորը գիտեին, որ եթե Դուլխանյանի թիմը մասնակցում է մրցումներին, առաջին տեղի մասին խոսելն անհնաստ է: Ուսուցչական կոլեկտիվում սովորություն էր դարձել ամեն տարի Արմեն Դուլխանյանին շնորհավորել հերթական պարզևների՝ գերատեսչական մեդալների, ԱՀ նախագահի սահմանած պարգևին, ՀՀ ԶՈՒ «Ծովակալ Իսակով» շքանշանի արժանանալու առթիվ: Հաճախ էր նախաձեռնում և կազմակերպում հրաձգության, շարային պատրաստության մրցումներ, ուսումնական շաբաթներ, ռազմադաշտային պարապմունքներ դպրոցականների և դպրոցին կից շեֆ զորամասի միջև, փոխադարձ այցելություններ տարբեր զորամասեր, անգամ սահմանային դիրքեր, որն էլ, ըստ ուսուցչի, լավագույն միջոցն է դպ-

հանջ, պարտաճանաչ, խորագիտակ, սկզբունքային, որպես իր երկրի քաղաքացի՝ քաղաքացիական պարտքի գիտակցումով, որի համար առաջնայինը պետության, հասարակության, աշխատանքի շահն է:

Ձինղեկ, պահեստազորի ավագ լեյտենանտ Արմեն Դուլխանյանը ադրբեջանա-թուրքական տանդեմի կողմից սանձազերծված աշնանային պատերազմի օրերին կրկին առաջնագծում էր՝ իր ընկերների ու սաների կողքին, ինչպես 2016-ի ապրիլին էր: Խաչենի մելիքական ժառանգներից արմատներ ձգած հայը չէր կարող անտարբեր հետևել այն ամենին, ինչ կատարվում էր իր հնամենի երկրի, իր աստվածաստեղծ ազգի հետ: Սակայն այս անգամ կյանքն այլ բեմադր էր կանխանշել Արմենի համար. նրա կյանքի թելը կտրվեց նոյեմբերի 1-ին Մատաղիսից ոչ հեռու Մարտակերտի համար նվիրված մարտերում:

Մեր գործընկեր Արմեն Դուլխանյանը այլևս մեզ հետ չէ, և գոնե մի սփոփանք. Արմենը չտեսավ բոլոր ստոր ու թշվառ, ապագային, պատեհապաշտ տականքների վարվելակարգն իր ազգի նկատմամբ, և որ իրենց կորցնելուց հետո անգամ պատմության քառուղիներում մենք նորից անտեր ենք ու անղեկ: Իսկ դեռ երեկ նա ոգևորված պատմում էր ծաղկող և բարգավաճող Արցախի ապագայի մասին, որտեղ պիտի գեներացվեին համայն հայության միտքն ու ուժը, երազում էր Ստեփանակերտը աշխարհասփյուռ հայության մայրաքաղաք դարձնելու հեռագնա նպատակների մասին, որի ավագանու անդամ էր ինքը: Այստեղ շուրջբոլորը պիտի լինի կանաչ և երազկոտ, տեսանելի և ապագայամետ, որի լուսավոր բակերում իրենց մանկական խաղերը կխաղային նաև իր երեք զավակները, փոքրիկ Հայկուն, որն ամեն օր տան դռան կամ հեռախոսի ձայնից վեր է թռչում իր սիրելի հայրիկին դիմավորելու, զիրկն ընկնելու և կարոտով համբուրելու ակնկալիքով, սակայն դեռ չհասկանալով, որ իր հայրն այլևս անմահ հերոս է, իսկ ինքը՝ հերոսի զավակ և նրա սխրագրերի մասին հետագայում պիտի կարդա իր ազգի հերոսական պատմության լեզբից:

Հայտնի ասույթ է. «Մարդը գնում է, գործը՝ մնում»: Արմեն Դուլխանյանը հերոսական սերունդ կրթած և դաստիարակած ուսուցիչ-ռազմագետ էր, որի թողած մանկավարժամեթոդական ավանդույթները մնայուն արժեք են և կհավերժվեն հայ ռազմարվեստի երկնածիրում: Ինչպես ասում են, ժամանակն է տնօրինում այն հնարավորն ու անհնարինը, ինչը ժառանգություն թողեց Արմեն Դուլխանյանը հետագա սերունդներին. ռազմարվեստի կախավորված դասասենյակ, հարուստ մեթոդական փորձ, մտորելու տեղիք տվող մտքեր, դիտարկումներ, անելիքներ...

Կան կորուստներ, որոնք ժամանակի ընթացքում ավելի ու ավելի ծանր են դառնում: Ցավոք, այդպիսին է մեր գործընկեր Արմեն Դուլխանյանի կորուստը: Մարդ, որն ապրեց սովորելով ու միաժամանակ սովորեցնելով սեփական օրինակով՝ առանց ավելորդ խոսքերի, սովորեցրեց գործով ու գործը սիրելով:

Հանգչիր խաղաղությամբ, սիրելի՛ գործընկեր, նվիրյալ հայ...

**Լորեդա ԱՐԱՅԱՍՅԱՆ**  
**Սյրեփ. Վ. Զհանգիրյանի**  
**անվան հ. 11 ավագ դպրոցի**  
**պատմության ուսուցչուհի**

ԴԻՄՈՐԴ-2021

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 փետրվարի 2021 թ.

N 47-Ն

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է:
1. Հաստատել Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա.ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2 փետրվարի 2021 թվականի
N 47-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1.1 ԲԱՎԱՍԱՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 6 columns: 1. Պատիչք, 2. Մասնագիտությունը, կրթական ծրագիրը, 3-6. Ընդունելության քննությունները (Սրբութային, Ոչ սրբութային)

1.2 ԲԱՎԱՍԱՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 6 columns: 1. Պատիչք, 2. Մասնագիտությունը, կրթական ծրագիրը, 3-6. Ընդունելության քննությունները (Սրբութային, Ոչ սրբութային)

2. «ՁՈՒԾԻ ԲԵՆԵՆՈՂՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՍ
2.1 ԲԱՎԱՍԱՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 6 columns: 1. Պատիչք, 2. Մասնագիտությունը, կրթական ծրագիրը, 3-6. Ընդունելության քննությունները (Սրբութային, Ոչ սրբութային)

\* Նշված մասնագիտություններով առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցութին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մրցութային երկու առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

\* Նշված մասնագիտություններով առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցութին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:
Մրցութային երկու առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.2 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՌԻՍԻՅՈՒՄ)

Table with 6 columns: Code, Description, and three sub-columns for indicators. Rows include categories like 'Ազդեցիկներ', 'Տեղեկատվական տեխնոլոգիաներ', 'Էներգետիկա', 'Տրանսպորտային համակարգեր', 'Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ', 'Շինարարություն', and 'Ազդեցիկություն'.

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՌԻՍԻՅՈՒՄ)

Table with 2 columns: Code and Description. Rows include 'Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)', 'Տեղեկատվության մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր (հիմնական կրթությամբ)', 'Ջրամատակարարում և ջրահեռացում (հիմնական կրթությամբ)', 'Քաղաքաշինական կադաստր (հիմնական կրթությամբ)', 'Գյուղատնտեսագիտություն (հիմնական կրթությամբ)', 'Անասնաբուժություն (հիմնական կրթությամբ)', 'Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական կրթությամբ)'.

3. ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3.1 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՌԻՍԻՅՈՒՄ)

Table with 6 columns: Code, Description, and three sub-columns for indicators. Rows include 'Ընդհանուր մանկավարժություն', 'Մասնագիտական մանկավարժություն', 'Տնտեսագիտություն', 'Միջազգային հարաբերություններ', 'Իրավագիտություն', and 'Տեղեկատվական տեխնոլոգիաներ'.

3.2 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՌԻՍԻՅՈՒՄ)

Table with 6 columns: Code, Description, and three sub-columns for indicators. Rows include 'Ընդհանուր մանկավարժություն', 'Մասնագիտական մանկավարժություն', 'Տնտեսագիտություն', 'Միջազգային հարաբերություններ', 'Իրավագիտություն', and 'Տեղեկատվական տեխնոլոգիաներ'.

3.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՌԻՍԻՅՈՒՄ)

Table with 2 columns: Code and Description. Rows include 'Թարգմանչություն և գործավարություն (հիմնական կրթությամբ)', 'Հայոց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)', 'Ռուսաց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)', 'Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ)', 'Դասավանդում տարրական դասարաններում (հիմնական կրթությամբ)', 'Նախադպրոցական կրթություն (հիմնական կրթությամբ)', 'Ատամնատեխնիկական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)', 'Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ֆինանսներ, կառավարում) (հիմնական կրթությամբ)', 'Մեներջներ (կառավարում) (հիմնական կրթությամբ)', 'Ֆինանսներ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)', 'Հաշվողական տեխնիկա յի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (հիմնական կրթությամբ)', 'Ջրոսաշրջություն (հիմնական կրթությամբ)', 'Փոխարդյունների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)'.

4. «ՄԵՍՐՈՂ ՄԱՋՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

4.1 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՌԻՍԻՅՈՒՄ)

Table with 6 columns: Code, Description, and three sub-columns for indicators. Rows include 'Ընդհանուր մանկավարժություն', 'Մասնագիտական մանկավարժություն', 'Տնտեսագիտություն', 'Կառավարում', 'Իրավագիտություն', and 'Տեղեկատվական համակարգեր'.

ԴԻՍՈՐԴ-2021

4.2 ԲԱՎԱԿԱՆԱՅԻՆ ԿՐԹԱՎԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱՎԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Օգտագործված հապավումներ

Table with 6 columns: Code, Name, and sub-categories (3, 4, 5, 6) for various educational levels and subjects.

- (բ) Բանավոր
(գ) Գրավոր
Ա Աշխարհագրություն
ԱՆՁ Անձլերեն
Գժ Գծագրություն
Նկ Նկարչություն
Գժն Գծանկար
Գճ Գունանկար
ԸՊ Ընդհանուր պատմություն
ԸՖՊ Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն
Կ Կենսաբանություն
Կոմպ Կոմպոզիցիա
ՀՊ Հայոց պատմություն
ՀԼԳ Հայոց լեզու և գրականություն
Մ Մաթեմատիկա
Մասն. Մասնագիտական
ՆԶՊ Նախնական զինվորական պատրաստություն
Ռ Բուսաց լեզու
ՍԱ Ստեղծագործական աշխատանք
Ք Քիմիա
Օտլ Օտար լեզու \*\*\*\*
Ֆ Ֆիզիկա

Ծ ա ն թ ու թ յ ու ն ն եր

\*Ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

\*\*Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցութային մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

\*\*\* Ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն:

\*\*\*\* Օտար լեզու (Ռուսաց լեզու, Անգլերեն, Գերմաներեն, Ֆրանսերեն):

Օտար լեզու մրցութային կամ ոչ մրցութային քննություն կարող է ընտրվել նշված 4 առարկաներից մեկը՝ դիմորդի հայեցողությամբ:

ԱՆՆԱՍՏԱՆԻ ԱՅԽԱՏԱԿԱԿԱՆՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱՅԻՆԱԿԱԿԱՆՄԻ ԴԵՎՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՐԱՎԱԼ Ա. ԼԱՋԱՐՅԱՆ

5. ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՅՈՒՐՋՅԱՆ» ԿԻՐԱՎԱԿԱՆ ԱՐՎԵՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԲԱՎԱԿԱՆԱՅԻՆ ԿՐԹԱՎԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌՎԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 6 columns: Code, Name, and sub-categories (3, 4, 5, 6) for the 'Gyurjanyan' private university.

ՅՈՒՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՃԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանի վերահսկողության տակ մնացած ուսումնական հաստատությունները ինքնակազմակերպվելով՝ Արցախի կառավարության աջակցությամբ շարունակում են իրենց բնականոն գործունեությունը Ստեփանակերտում:

Շուշիի տեխնոլոգիական համալսարանը պատերազմից հետո ուսումնական գործընթացը սկսել էր Ստեփանակերտի հ. 2 դպրոցում, այնուհետև տեղակայվել է հ. 9 դպրոցում:

Բուհի կորուստները մեծ են. թշնամու վերահսկողության տակ են մնացել հոյակապ շենքեր, ժամանակակից նյութատեխնիկական հարուստ բազան: Բայց ամենամեծը, բուհի ուսումնամեթոդական բաժնի պետ Թամարա Գրիգորյանը, որի հետ զրուցեցինք համալսարանի առկա վիճակի մասին, համարում է մարդկային անդառնալի կորուստները:

Բուհը հավաքագրել է ուսանողներին: Առկա ուսուցման համակարգում՝ միջին մասնագիտական կրթական ծրագրում, 403 ուսանող կա: Նրանցից 20-ն է մնացել Հայաստանում (այս և մյուս թվերը հունվարի վերջի տվյալներով են): Նրանց հետ ուսուցումը հեռավար է կազմակերպվում: 1-ին կիսամյակի ուսումնական գործունեությունը, ըստ կարգի, պետք է ավարտվեր դեկտեմբերի վերջին, սակայն պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ մեկ ամսով երկարաձգվել է և շարունակվել մինչև հունվարի 30-ը: Կիսամյակային քննություններն ուսանողները հանձնել են առկա ձևով՝ կենդանի շփման միջոցով:

ՇՏՀ ուսանողների մեծ մասը տղաներ են, որոնցից շատերը ժամկետային ծառայության մեջ են, և նրանց մի մասի զորացրման ժամանակն է: Թ. Գրիգորյանին հանդիպեցինք այն ժամանակ, երբ ուսանողներին հավաքագրելու նպատակով նրանց տվյալներն էր ճշտում:

Պատկերացնել կարելի է նրա հոգեվիճակը, որը ժամկետային ծառայություն ավարտող ուսանողի տան հեռախոսահամարն է հավաքում՝ տեղեկացնելու, որ գա դիմում գրի, վերականգնվի և ուսումը շարունակի, բայց տեղեկանում է, որ գոհվել է կամ անհետ կորել... Այդպիսի 47 ուսանող ունի Շուշիի տեխնոլոգիականը, և, Աստված մի արասցե, որ թիվն այդ աճի: Ուսանողների մեծ մասը շրջաններից է՝ Հադրուբից, Շուշիից, Ավետարանոցից, Սընախից, Ակնադեղից, թշնամու վերահսկողությանն անցած այլ բնակավայրերից:

Տարհանված ուսանողների մեծ մասը վերադարձել է, իսկ ովքեր մնացել են Հայաստանում, տեղավորվել են տեխնոլոգիական համալսարանի Հայաստանի ՇՏՀ ներկայացուցչության համրակացարանում: Բացի այդ, որոշ խմբեր (ճարտարագիտություն, քաղաքացիական շինարարություն, ջրային համակարգեր) փորձուսուցումն անցնում են Երևանում. մինչև պատերազմն էլ այդպես էր:

Երկու խումբ ՇՏՀ ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանի հրամանով հունվարի 1-22-ը երևանյան ներկայացուցչությունում անցկացրել են լաբորատոր և գործնական պարապմունքներ, որոնք վարել են տ.գ.դ., պրոֆեսոր Սարգիս Հայրոյանը, տ.գ.դ., դոցենտ Վաչե Թոքմաջյանը, տ.գ.թ., դոցենտ Արթուր Արևշատյանը և տ.գ.թ., դոցենտ Արմեն Բաբայանը:

Լաբորատոր և գործնական պարապմունքներն անցկացվել են «Հասկանալի սարքավորումներ», «Շինվորատրուկցիաներ», «Տեսական մեխանիկա» և «Գրունտների մեխանիկա» առարկաներից:

Պարապմունքների ընթացքում ուսանողները ծանոթացել են չափագրումների մեթոդներին և համապատասխան սարքավորումների միջոցով կատարել մի շարք փորձեր:

Գործնական պարապմունքներն ուսանողներին հնարավորություն են տալիս հմտանալ ընտրած մասնագիտությունների մեջ և հետագայում ճանապարհի հարթել դեպի տնտեսության կողմից պահանջարկ ունեցող ինժեներական խնդիրների լուծում:

Ռեկտորատի նիստում քննարկվել են նաև պատերազմի հետևանքով անօթևան մնացած ուսանողների կացարանային հարցերի հետ կապված տարբեր լուծումներ: Ընդունվել է ի գիտություն, որ նրանց մի մասը ժամանակավորապես տեղակայվել է ՇՏՀ երևանյան ներկայացուցչության համրակացարանում:

ՇՏՀ-ն համագործակցության պայմանագիր ունի Հայաստանի ճարտարապետաշինարական և ագրարային համալսարանների հետ, և Երևանում գտնվող արցախցի ուսանողներն այդտեղ են ստանում իրենց կրթությունը: Միջին մասնագիտականի վերը նշված 20 հոգին էլ հաճախում են այդ համալսարանների քոլեջները, բայց քննությունները հանձնում են այստեղ: «Այնպես որ, ամեն միջոց օգտագործում ենք, որ Շուշիի տեխնոլոգիական համալսարանը պահպանվի: Պետությունն էլ է դրանում շահագրգռված», - ասաց Թ. Գրիգորյանը: Ավաճի հավաստումը հաստատված պետական բյուջեն և մասնագիտությունների ցանկն են:

Համալսարանը շարունակում է պետական հավատարմագրման գործընթացը: Ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը դասախոսական կազմին հայտարարել է, որ 2021թ. մարտ ամսվա երկրորդ երեքշաբթի օրը Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կմեկնարկեն տոտալ, պարտադիր ատեստավորման գործընթացները:

Առաջին փուլով վերապատրաստում կանցնեն էկոնոմիկայի բլոկի դասախոսները,

որոնք կատեստավորվեն Երևանում կամ այնտեղից հրավիրված հանձնաժողովի կողմից: Ատեստավորում չանցած դասախոսների գործունեությունը համալսարանում ս.թ. սեպտեմբերի 1-ից կդադարեցվի: Համալսարանում այսուհետ դասավանդելու են միայն բարձր մակարդակ ունեցող դասախոսներ, որոնք կունենան բավարար գիտելիքներ և հմտություններ:

Ուսանողները համալսարան դիմում են տարբեր հարցերով: Նախ ներկայացնում են տեղեկանքներ սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում որտեղ են եղել: Բոլորն էլ անխտիր մասնակցել են մարտական գործողություններին: «Չունենք այնպիսի ուսանող, որ չկարողանա ման տեղեկանք ներկայացնել, եթե, իհարկե, ժամկետային ծառայությունից ազատված չէ: Բայց նրանք էլ թիկունքում հանրօգուտ աշխատանքով են եղել զբաղված», - ասաց ուսումնական բաժնի վարիչը:

Համալսարանում շարունակվում են պլանավորված աշխատանքները: Դասախոսություններով հանդես են գալիս նաև հրավիրված մասնագետները: Վերջերս այցելած պրոֆեսոր Ալբերտ Մարգարյանը ֆիզիկայից հատուկ դաս է անցկացրել նաև Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցի բարձր դասարանների համար:

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանի համոզմամբ՝ մասնագիտական կողմնորոշումը պետք է սկսել դպրոցից:

Տեխնոլոգիական մասնագիտություն ընտրելիս այսօր հայրենասիրություն է, քանզի պատերազմով մեր երկրին դա խիստ անհրաժեշտ է:

Սեփ. լրատվություն







ՊԱՏԵՐԱԶՍ

ՏԱՆՈՒ Ե ՏՐԿԱԾ ՄԱՐՏԸ ԵՎ ՈՉ ՀԱՅՐԵՆԻՔԸ

18.10.1990թ.: Ինֆորմացիոն բաժինը հայտնում է, որ կազմկու...

Ինֆորմացիոն բաժինը շարունակում է, որ պետք է պարետա...

24.10.1990թ.: Մեզ ուրախացրեց «Արցախ» հայրենակցական...

Այսօր էլ իմ հոգին կոմունիստական է, չէ՞ որ մենք փրկվել ենք...

Այնպես որ, Նիկոլ Փաշինյանը, որ այսպես կառչել է վարչապե...

Նիկոլ Փաշինյան, Ազգի դավաճան, Խցվի՛ր գերեզման, Չքվի՛ր հավիտյան:

Այնպես որ, կրկնում են, 2020թ. 44-օրյա պատերազմը 1989-...

Յուրա ընտան, որ մեր ժողովուրդն այս վիճակից հաղթանակով...

Մառն ԵԱՅՆԱԶԱՐՅԱՆ Մշակույթի վաստակավոր աշխատող, անհատական թոշակառու

1992 թվականի այդ օրը՝ հունվարի 26-ին ադրբեջանցիները մեծաքանակ...

Աշխատանքի բերումով մեկ անգամ չէ, որ եղել են Շուշիի շրջանի Քարին...

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ. ԶԵՏՊԱՏԵՐԱԶՍՅԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Անցած սեպտեմբերի 26-ին ստեփանակերտցիները նշեցին Քաղաքի օրը:

Ստեփանակերտը հակառակորդի թիրախներից էր, կիրառվում էր և՛ հրետանին, և՛ օդուժը:

Չրադադարից շատ չանցած՝ ստեփանակերտցիներն աստիճանաբար սկսեցին վերադառնալ:

Յուրա ընտան արմատապես էր, այդ օրը գոհվեց: Այսօր ամենամեծ ցանկության...

զամատակարարման խափանումները գնալով քչանում էին, իսկ հունվարի կե...

Քաղաքն ու իր մարդիկ առաջվանը չեն: Եվ բնական է. պատերազմ է եղել, մանավանդ, երբ այդ պատերազմում ոչ...

Չետպատերազմյան Ստեփանակերտին բնորոշ են ոչ միայն հերթերը: Շուկաներում վաճառատեղանքները գրեթե...

Ըստ վերջին տվյալների Քարին տակում փաստացի բնակվում էր 700 մարդ:

Ցավալի է, բայց՝ փաստ: Չերոսական գյուղի հերոս բնակիչներն օգնության հույսին են հիմնա:

Ամեն տարի գյուղը հանդիսավորության Եշուն էր հերոսամարտի օրը, բազմաթիվ հյուրեր էր ունենում:

Ցանուլ է տրված մարտը և՛ ոչ հայրենիքը: Դեռ կբացվեն արյունոտվելու չափ սեղմված բռունցքները:

Չերոս միջ է՝ խաղաղություն է, բայց նաև խաղաղություն չէ: Երբ քո խաղաղությունը դրսից եկած խաղաղապահը պիտի պահի, կնշանակի՝ արտաքին...

Չորս այն է՝ խաղաղություն է, բայց նաև խաղաղություն չէ: Երբ քո խաղաղությունը դրսից եկած խաղաղապահը պիտի պահի, կնշանակի՝ արտաքին...

Եթե մեր ճակատագիրը մեր ձեռքերում է, ինչո՞ւ է այս անորոշությունը շարունակվում, ամեն ինչ կարծես ինքնահոսի է մատմելած, մեր փոխարեն կարծես ուրիշն է մտածում, ուրիշն է կառավարում, ուրիշն է որոշումներ ընդունում:

Երբ մարդկանց հոգում լույս վառվի, Ստեփանակերտը նորից կծաղկի, նորից կպայծառանա:

Շովինար ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՂԱՍԵՐ

ԱՐՃԱՆՅԱՆ 30-ԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԸՆԴՔԱՅԻՆ ԲԱՐՔԱՅԻՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Արցախյան շուրջ 30-ամյա պատերազմում կրած սոսկալի պարտությունն արդեն իսկ պատմություն է: Բոլորս ցավով ենք արտաբերում «պարտություն» մեզ համար խորք բառը, բայց պետք է գիտակցորեն մոտենալ, որ հաղթանակի բերկրանքը վայելողը պետք է նաև քաջություն ունենա ճաշակել պարտության դառնությունը, որքան էլ այն լինի սոսկալի, դժվարամարս:

Այն, որ պատերազմն անգործ են դարձրել է բոլորիս օջախները, փաստ է, և այն, որ բոլորս կարող ենք յուրովի մեկնաբանել պատերազմում կրած պարտության պատճառները, օրինաչափ է: Քանզի հնչեցված տեսակետների մեջ էլ կարող են լինել նպաստավոր փաստարկներ: Եվ միայն այն, որ փորրիկ Եմիճանից առաջնագծում մարտնչում էին 11 Առաքելյաններ (1 ժամկետային, 4 պայմանագրային, 1 սպա, 5 պահեստագրային), ինձ իրավունք են վերապահում մտորումներով կիսվել ընթերցող հանրության հետ: Ես՝ Արցախյան պատերազմի հաշմանդամս, մտովի վերապրեցի մեր 30 տարիների պատմությունը, որն ունի փառավոր հաղթանակի էջեր, ինչպես նաև մութ ու շղարշված էջեր:

Նախ՝ բանակի հզորության մասին (ես խոնարհվում եմ այն հազարավոր երիտասարդների շիրմների առաջ, ովքեր կյանքով հատուցեցին Արցախյան գոյապայքարին): Բանակի հզորության մասին շատ է խոսվել ու գրվել, նույնիսկ ֆիլմեր նկարահանվել, մինչդեռ թերությունների մասին կամ չի խոսվել, կամ էլ՝ ի միջի այլոց: Մեր ռազմական գործիչները բնավ լավ չեն սերտել այն դասը, որ հուշում է՝ «Պատերազմը կապիտալիզմի մշտական ուղեկիցն է», իսկ դա նշանակում է, որ ռազմական արդյունաբերությունը տնտեսության ամենագարգացող ուղղությունը պետք է լինի՝ հենված արդիական տեխնոլոգիաների վրա: Մենք չօգտագործեցինք համայն հայության ներուժը ժամանակակից հզոր ռազմական հզոր արդյունաբերություն ստեղծելու համար: Ավելին, լինելով պատերազմող երկիր՝ սեփականաշնորհման տխրահռչակ թողի տակ փոշիացրինք մեզ ժառանգություն

մնացած հազարավոր արդյունաբերական ձեռնարկություններ (միայն ու միայն սեփական շահի համար): Այնինչ Հայաստանը տնտեսության զարգացման մակարդակով առաջնակարգ տեղ էր գրավում: Նախկին ԽՍՀՄ կազմում՝ 4-րդ տեղը, իսկ պղնձի արդյունահանման մակարդակով՝ 3-րդ տեղը:

Այն, որ բանակում կարգապահությունը անընդհատ նվազում էր, դա էլ փաստ է: Վկան՝ տասնյակ մահվան ելքով պատահարներ, ինքնասպանություններ: Այս թերություններն ինչ-որ չափով կախված են հաճախակի տրվող արձակուրդներից (արձակուրդը որպես պարզև պետք է վատակել), ծնողների հաճախակի տեղի-անտեղի այցելություններից, հեռախոսակապի շռայլորեն օգտագործումից: Մինչդեռ պատերազմող երկրի բանակը պետք է արմատապես տարբերվի իր կարգապահությամբ, զենքին, զինտեխնիկային տիրապետելու, զինամթերք օգտագործելու կարողությամբ:

Որքա՞ն իրավացի էին մեզանից 5000 տարի առաջ ապրած շումերացիները: «Եթե երկիրը վատ զինված լինի, թշնամին միշտ դարպասների մոտ կանգնած կլինի»:

Հրաշքով կենդանի մնացած շատ պահեստագործայիններ այն կարծիքին են, որ կհաղթեինք, եթե պատերազմն իր բնույթով նման լիներ մինչ այդ եղածներին: Պահեստագործայիններին հիշում ենք միայն այն ժամանակ, երբ որոտում են հրանոթները: Դա էր պատճառը, որ չկար ներդաշնակություն, գործողությունների համագործակցություն բանակի և պահեստագործի միջև: «Անպարտելի» բանակի մասին կարծրատպությունը գերիշխող էր ամենուր: Զինկոմիսարիատների թույլ ու ոչ հետևողական աշխատանքի պատճառով պահեստագործայինների զգալի մասը հուսալքված խույս տվեց անմիջական ռազմագործողություններից: Այսօր էլ փորձ է արվում պահեստագործից կանոնավոր բանակ ստեղծել: Չպետք է մոռանալ, որ նրանցից շատերը մոռացել են նույնիսկ ինքնաձիգ օգտագործելը, ուստի մինչ նրանց զինվորական համագործակցության հարցերը անհրաժեշտ է լուրջ ու

հետևողական աշխատանք տանել: Նրանց չափտի դիտարկել որպես զուտ դիրքապահների, նրանցից պետք է ստեղծել կանոնավոր ստորաբաժանումներ՝ գիտակ հրամանատարներով, անցկացնել վարժանքներ, ծանոթացնել ժամանակակից մարտավարության կանոններին, ինչպես մեր, այնպես էլ թշնամու զինանոցի առկա զինատեսակներին, արթնացնել երբեմնի հզոր մարտական ոգին:

Դեպի հաղթանակ տանող կարևոր ճանապարհներից մեկը բանակի սպառազինության արդիականացումն է սեփական ռազմարդյունաբերության զարգացման շնորհիվ:

Պատերազմում կրած պարտության պատճառներից մեկը հայկական դիվանագիտության ոչ նրբանկատ, ոչ ճկուն գործունեությունն էր: Դեռ ավելին, պոտորում էինք այն աղբյուրների ակերը, որոնցից սնուցվում էր մեր անվտանգությունը: Արհեստական անջրպետ էր ստեղծվում Ռուսաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերություններում, ՀԱՊԿ անդամ պետությունների համագործակցության հետ: Մեր դիվանագետները չկարողացան ըստ արժանվույն գնահատել քաղաքական զարգացումներն ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Հարավային Կովկասի տարածաշրջանում:

Միավրած չեն լինի, եթե ասեն, որ մեր պարտությունն սկսվեց հենց 1994թ. մայիսին ստորագրած զինադադարի պայմանագրից (ինչը մենք հաղթանակ էինք որակել): Այստեղից էլ սկսվեց աղբյուրաբան-թուրքական դիվանագիտության հարթաբաշխը: Մեկ անգամ ևս հաստատվեց Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի ասածը. «Թուրք զինվորը կպարտվի, թուրք դիվանագետը՝ ոչ»: Սկսած այդ պահից, գրեթե բոլոր կարգի համդիպումներում թե՛ արտագործախարարների, թե՛ նախագահների, Աղբյուրաբան պարտվողի դերում չի հանդես եկել: Դեռ ավելին, յուրաքանչյուր հանդիպումից հետո բարձրաձայնել է, որ Ղարաբաղի հարցի լուծման միակ ուղին պատերազմն է: Պատերազմի միջոցով Ղարաբաղյան հարցին լուծում տալը թուրքական դիվանագիտու-

թյան առանցքային օղակներից էր, իսկ դրա համար նախադրյալներ ստեղծողը՝ մենք: Յոթ շրջան կորցրած Աղբյուրաբանի բացի զինադադարից ոչինչ չէր պարտադրվում: Եվ դա նրանց դիվանագիտության լուրջ հաղթանակն էր: Հայկական դիվանագիտությունը երբեք լրջորեն չընդունեց Թուրքիայի՝ տարածաշրջանի ամենահզոր պետության հայտարարություններն առ այն, որ ամեն ինչ անելու է հարցը Աղբյուրաբանի օգտին լուծելու համար: Իսկ մենք շարունակում էինք «հալած յուղի պես» ընդունել «հարցը ռազմական լուծում չունի» արտաքին աշխարհի դիվանագետների, քաղաքական գործիչների, պետությունների դեկլարանտի պնդումները:

Ղարաբաղյան հարցի արդարացի լուծման համար հայկական դիվանագիտությունը շարունակում է համագործակցությունը Միևսկի խմբի հետ: Թվում է, թե Միևսկի խմբի դիվանագետները և նրանց ներկայացնող պետությունները խիստ մտահոգված են հարցի լուծմամբ: Միևսկի խմբի առաջ քաշած ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության գաղափարախոսությունն իր էությանը հիշեցնում է «Կարապը, խեցեգետինը և գայլաձուկը» առակը: Խմբի աշխատանքները կաշկանդվում էին նաև նրանով, որ իրենց իսկ պետությունների շահերը բախվում են ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Կովկասում:

Ղարաբաղի հիմնահարցը խաղաղ ճանապարհով լուծելու, պատերազմը կանխելու գործում շատ անելիքներ ունեն հայ հոգևոր դիվանագիտությունը: Համայն աշխարհով մեկ սփռված հայ հոգևոր դիվանագիտությունը Հայաստանը որպես աշխարհում քրիստոնեությունը առաջինը պետական կրոն ընդունած երկիր, հավուր պատշաճի չէր ներկայացնում: Հայ հոգևոր դասը պետք է ամեն ամեն ինչ, որ Հայաստանը քրիստոնեական աշխարհում դիտվեր որպես քրիստոնեական մասունք, նշխար, փորձեր Հայաստանի նկատմամբ հասնել նույնիսկ անձեռնմխելիության աստիճանի: (Է՛յ, է՛յ ո՞ւմ վրա եք սուր քաշում, բա հայոց մեծ ազգին չե՛ք ճանաչում: - Ըստ Խ. Արուվյանի):

Պատերազմում կրած պարտության պատճառներից մեկն էլ պարզաբանելու համար մեկնաբանեն մի սովորույթ հին պարսիկների կյանքից: Իսկ Պարսկաստանում երեխաներին, սկսած հինգ տարեկանից, սովորեցնում էին ձի հեծնել և սուտ չխոսել: Թվում է, թե այս բառակապակցություններն իրար հետ կապ չունեն: Մինչդեռ ձի հեծնելն ինքնին հուշում է, որ Իրանում փոքր հասակից երեխաներին վարժեցնում էին ապագա զինվորական գործիչ: Իսկ սուտ խոսելը, պարզ է, որ հարիր չէ զինվորին, հայրենիքի պաշտպանին: Պատերազմի ողջ ընթացքում մենք եթերից միայն սուտ լուրեր էինք ստանում: Բայց ինձ համար ավելի մտահոգիչ է այն փաստը, որ սուտ խոսելը և այն հետազայում կոծկելը մուտք է գործում երկրի կառավարման համակարգ, այդ թվում՝ ուժային կառույցների, ինչպես նաև տնտեսության զարգացման, ժողովրդավարության համակարգ: Այն, ինչ ասվում է բարձր տրիբունաներից, գործնականում միանգամայն այլ է: Սուտը խարխուլում է պետության իմքերը:

Ես, ըստ իս, փորձեցի վեր հանել այն թերությունները, որոնք ի հայտ եկան ոչ միայն ռազմական գործողությունների ընթացքում, այլև որոնք խոր արմատներ էին ձգել դեռ վաղ տարիներից, ու դրանց վերացման համար ջանասիրաբար հետևողական աշխատանք է հարկավոր: Թույլ տված սխալների համար չպետք է ափսոսալ, քանզի առանց դրանց ճշմարտության չենք հանգի:

Հենց նույնների 9-ի կործանարար պարտությունից պետք է դասեր քաղել, հաղթանակի ուղիներ որոնել՝ հաստատականորեն ու գոտեպնդված կանգնելով հայրենի հողի վրա:

Լեւոն ԱՌԱՔԵԼՅԱՆ  
Արցախյան պարտազմի  
վերաբան  
Գ. Եմիճան

ԵՐԱՆՏԱՊԱՐՏ ԵՆՔ ԲԵՐ, ՀԱՅ ԶԻՆԿՈՐ



Ստեփանակերտի Խ. Արուվյանի անվան հ. 1 դպրոցի 5-րդ դասարանի աշակերտներն այցելեցին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում արդեն հուշակոթող դարձած վայրը և երգվեցին ու անցան «Ձարթոնք» մանկապատանեկան կազմակերպության «Արծվիկների» շարքերը: Նրանք խոստացան, որ գիտելիքներով կզինվեն ու կստեղծեն այն հզոր երկիրը, որի մասին երազում էին հերոսացած տղաները: Փառք Հայոց բանակին, հավերժ փառք ընկածներին:

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ

ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ԿՅԱՆՔԻՑ ԱՌԱՎԵԼ



Որպեսզի ցեղդ ու հայրենիքդ ապրեն, նրանց համար մեռնելու կամք ունեցիր: Իբրև հայ մարդ անպետք է նա, ով չունի այդ կամքը:

Գ. Նժդեհ

Անորոշության ու հոգեկան տառապանքների՝ ամիսներ տևող այս անհատակ ծովում երբեմն-երբեմն փորձում ենք վերագտնել մեզ ու գնահատել մեր այն զավակների սիրագործությունները, ովքեր մի-մի երազանք գրկած՝ անվարան կանգնեցին ու իրենց մատաղ կյանքը չխնայեցին հայրենի սահմանները սրբորեն պաշտպանելու համար:

Այս ծանր մղձավանջից դուրս գալու և դաժան իրականություն վերադառնալու միակ ելքը մնում է, թերևս, հենց այդ արժանավոր զավակների հարազատների հանդեպ մեր ուշադրությունը, ծանր վշտի հանրային գիտակցումը:

Վիշտը կիսելու ընդունված մոտեցումն էլ ինչ-որ տեղ վերացական է, պարզապես պետք է հաճախակի լինել նրանց կողքին՝ հոգեբանորեն աջակցելու: Իրոք, ինչպե՞ս է հնարավոր կիսել այն հզոր ցավը, երբ մոր երկու որդիները գոհվեցին, ու այժմ գրկվել է բանականությունից, երբ ծնողի միտումնաբեր (իրենց արտահայտությամբ՝ աչքի սևն ու սպիտակը) չկա, երբ կինը կորցրել է երկու որդիներին ու ամուսնուն (իմաստագուրկ կյանք), երբ սիրած աղջիկը կորցրել է իր նշանածին (հարսանիքի օրն էլ նախանշված էր), երբ զինվորը չհասցրեց վայելել հայր դառնալու բերկրանքը... Ինչքա՞ն օրինակներ կարելի է բերել մեկը մեկից ահասարսուռ, մեկը մեկից անպատմելի: Ի՞նչ ասես այն ծնողներին, որոնց աչքը միշտ դառն կողմն է լինելու, ու ամեն ոտնաձայնից թրթռալու է նրանց սիրտը. գուցե մինչև մահ-գերեզման էլ այդպես է լինելու:

Այսօր պարզապես ապրում ենք՝ մեկս մեկին սատարելով ու ցավը ցավին հակադրելով: Ցավի ահագնացող կծկն էլ փորձում ենք գլորելով թեթևացնել, որ հանկարծ մեր սիրտն էլ չկարծրանա նրա շերտերից:

Այս պատերազմը մեզինքն իսկ մեր թանկագիններին: 2020-ի ոսկեհեր աշունը սև հագավ մեր ազգի համար: Բանակա-նությունից զրկվեցինք բոլորս, խենթա-ցանք ազգովի, քանզի կորցրինք 18, 19, 20 տարեկան մի ողջ սերնդի, որի քանակը հազարներով է չափվում:



Այդ հազարավորներից մեկն էր Սարմեն Գասպարյանը, որի ծննդյան 20-րդ տարեդարձի արարողությունը Ասկերանի շրջանի հերոսական հնամալ օյուղի միջնակարգ դպրոց էր բերել նրա հարազատներին ու բարեկամներին, դասընկերներին, թոշակի անցած ուսուցիչներին:

Ոչ մի հանդիսավորություն, ոչ մի պաշտոնական կարգ չկար, պարզապես եկել-հավաքվել էին՝ ամբողջացնելու Սարմեն անհատի հերոսական կերպարը: Լռությու-

նը, անհուն ցավն էր տիրում դպրոցի Փառքի սրահում: Այդ լռությունը խախտում է ռուսաց լեզվի ուսուցչուհի Մեդիսա Մեժլումյանը. «Մարդու ամենամեծ տաղանդը ուրիշի տաղանդը գնահատելու կարողությունն է: Սարմենը տաղանդավոր էր նաև այս հարցում: Գիտեր անթաքույց հրճվել ու անկեղծորեն հիացմունքի խոսքեր ասել ուրիշի ստեղծած գեղեցիկ արժեքների մասին: Այսօր էլ մեր հերթն է նույնը անել նրա համար: Սա նվազագույնն է, ուսուցիչը կարող է անել իրեն հայրենյաց դասեր թողած նվիրյալ սանի համար: Դուք տեսնում եք երկու խումբ աշակերտների. ինձնից աջ նրանք են, ովքեր ժառանգել են Սարմենի վրձինը: Փորձիկ Սարյանները այսօր կնկարեն այն երազանքը, հանուն որի պայքարում էր Սարմենը՝ ի շահ խաղաղության: Միջոցառման ավարտին նրանց նկարները կցուցադրվեն հանդիսատեսներին: Ինձից ձախ համակարգչային խաղերի սիրահարներն են, որոնք կխաղան Սարմենի հեղինակած խաղը, որը նա ստեղծել է թունով կենտրոնում ուսանելու ժամանակ՝ 2016-ին: Այսօր մրցույթ չի լինի. խաղում և նկարում ենք Սարմենի հիշատակի համար, ապրում և արարում ենք հանուն Սարմենի»:

Ահա այսպես պարզ ու անբռնազբոսիկ, Սարմենի պես համեստ ու շիտակ:

Էկրանից մեզ է ժպտում հերոսը, ու ձգվում է նրա կյանքի ճանապարհը՝ մանկությունից մինչև երիտասարդություն: Նա



մեր դպրոցի տաղանդավոր սաներից մեկն էր: Վեց տարի շարունակ հաճախել է Ստեփանակերտի Թունով կենտրոն և իր մտերիմ դասընկերոջ՝ Յուրիի հետ դարձել Կենտրոնի աղջիկ ընկած գույզը՝ ընտրելով ծրագրավորողի մասնագիտությունը: Ուսումնառության տարիներին ամենամաքրած առարկան մաթեմատիկան էր և, բնականաբար, սիրելի ուսուցիչը՝ առարկան դասավանդողը՝ ընկեր Մելքունյանը, որը միաժամանակ նրանց դասընկն էր: Տարիներ շարունակ սիրելով ու փայփայելով այդ առարկան՝ մի օր Սարմենը պիտի կանգներ իր ուսուցչուհու առջև ու խոստովաներ. «Ընկեր Մելքունյան, այսքան շատ սիրելով Ձեր առարկան՝ ես դավաճանեցի Ձեզ, որովհետև չեմ ուզում ծրագրավորող դառնալ. ինձ շատ է հետաքրքրում ճարտարապետի մասնագիտությունը»: Եվ Մարիետա Մելքունյանը մեծահոգաբար ներեց իր սանի «դավաճանական» քայլը, ընդունեց նրա որոշումը:

Ու սկսվեցին Սարմենի՝ ամիսներ տևող քրտնաջան պարապմունքները գծագրության ու նկարչության բնագավառում: Նրան այդ շնորհը փոխանցվել էր կերպարվեստի իր ուսուցչուհուց՝ Ռուզան Զակոբյանից:

Կամային էր ու հետևողական, և տքնաջան աշխատանքները տվեցին ցանկալի արդյունք. Սարմենը բարձր միավորներով ընդունվեց Երևանի պետական ճարտարապետաշինարարական համալսարան: Ընդունվեց, բայց սովորելու հնարավորությունից չօգտվեց. ընկերները մեկնում էին զինվորական ծառայության,



ինքն ինչպե՞ս կարող էր ետ մնալ այդ սուրբ առաքելությունից: Ու զինվորագրվեց հայրենիքի պաշտպանության գործին: Ծառայում էր պարտաճանաչ ու բարձր պատասխանատվությամբ... մինչև պայթեց Արցախյան երկրորդ պատերազմը՝ առաջինից ավելի դաժան ու ահասարսուռ:

Փառքի սրահում հավաքվածները փորձում են իրենց հիշողություններով ստեղծել հերոսի կենդանի կերպարը: Ցավը կոկորդում խեղդելով՝ ելույթ են ունենում ուսուցիչներ-

չփուններից տեղեկանում ենք, որ որդու գոհվելուց հետո շատերն են Երևանում խորհուրդ տվել նրան անփոփել Եռաբլուրում, սակայն մայրն ընդդիմացել է՝ ասելով. «Սարմենս շատ էր սիրում Արցախը, հատկապես հայրենի հնամալ տղ, որի շենացմանն ուղղված բազում ծրագրեր ունեւ: Եթե ես նրան անփոփեմ Եռաբլուրում, ինձ Արցախին կապող օղակ այլևս չի լինի, ու երբեք չեմ վերադառնա այնտեղ, իսկ դա իմ որդուն հաստատ դուր չէր գա, հետո էլ դրանով ես մեղանջած կլինեի նրա հայրենապաշտական զգացմունքների դեմ: Ու կհամարվեի դավաճան մայր»:

Ահա այսպես Սարմենն ամփոփվեց հայրենի հնամալ տղուն՝ Արցախյան առաջին պատերազմի սուրբ նահատակների հուշահամալիրում՝ արժանիորեն ու հպարտորեն վաստակելով նրանց կողքին լինելու բարձր պատիվը:

Ուրեմն, բացի այն հանգամանքից, որ անձի գիտակցական կյանքի ձևավորման գործում կարևոր դեր ունի կրթօջախը, չենք բացառում այն փաստը, որ հայրենասիրական գաղափարները սերունդներին են փոխանցվում նաև մայրական կաթի հետ: Փառք ու պատիվ այն հերոս մայրերին, որոնց որդիներն անվարան ընտրեցին «Մահ իմացյալ՝ անմահություն» փառահեղ ճանապարհը:

Այսօր Սարմենի մայրը՝ Ռուզաննան, իր տունը մի յուրահատուկ թանգարանի է վերածել. միանգամից աչքի զարնող որդու կյանքի ճանապարհն արտացոլող անկյունն է՝ խնամքով ու մեծ հոգատարությամբ ձևավորված, իսկ պատերը զարդարում են որդու՝ արվեստի լուրջ գործերի հետ մրցակցող նկարները: Դրանք ձեռքի աշխատանքներ են: Տունն ամբողջովին շնչում ու ապրում է Սարմենով: Նկարների շարքը լրացնում է կերպարվեստի ուսուցչուհու՝ Սարմենին նվիրված աշխատանքը: Շատ ծանր տանելով սիրելի սանի մահը հանուն հայրենյաց՝ Ռուզանը փորձել է իր տառապալից ապրումները հաղթահարել սփոփիչ մի քայլով. ձեռքով կերտել է նրա պատկերը ու նվեր տարել հերոսի պաշտելի մորը՝ չիմանալով անգամ, որ հենց այդ օրը մոր ծննդյան օրն է:

Չարյանի արժանավոր զավակ Սարմենի կյանքի թելը կտրվեց 2020-ի հոկտեմբերի 14-ին Չաղրուքի դիրքերում՝ 20-րդ գարունը չբլորած: Վիրավորվել էր մոտիկ ընկերներից մեկը՝ Դավիթը, Սարմենը ինչպե՞ս կարող էր հանգիստ մնալ տեղում: Եվ շտապեց փրկել ընկերոջը, ու հենց այդ պահին թշնամու գնդակը գտավ նրան... Ցավոք. գոհվեց նաև այն քաջ մարտիկը, ում համար կյանքը չխնայեց մեր Սարմենը:

Փառք ու պատիվ բոլոր այն հերոս նահատակներին, որոնց թիվը հազարներով է չափվում:



ԱԶԳԱՅԻՆ

ԿԱՔԱՎԱԲԵՐՂՆ ՈՒ ՆԱՅՈՑ 700 ԲԵՐՂԵՐԸ



Լուսանկարում՝ Դավիթյան Զարգարյան, Վիկտոր Չամբարձունյան, Գրիգոր Գուրգարյան:

Թե ինչպես են հայերը միջնադարում արտագաղթի փոխարեն բերդեր կառուցել և բոլոր թելերով կապված մնացել մայր հայրենիքին:

«Ես չգիտեմ, թե ով է եղել Կաքավաբերդի ստեղծող իշխանը, բայց պարզ է արդեն, որ նա չի մտածել, մտքով իսկ չի անցկացրել հավաքել ունեցած-չունեցածը, կապել-կապկպել տուն-տեղ, առաջ գցել երեխաներին, ընտանիքը ու կորչել հեռանալ այս ավերված երկրից և փնտրել հանգստություն ու ապահովություն օտար հողի վրա...»

Այդպես վարվողներ, իհարկե, եղել են, ինչի վկայությունը կարող է լինել բոլոր ժամանակներում աշխարհասփյուռ բարձրատոհմիկ հայ ընտանիքների օրինակը, ընտանիքներ ու զարմեր, այո՛, բարեկեցության և համբավի հասած: Բայց դրանք եղել են հատուկներ, ինքը երևույթը՝ երկիրը թողնել և հեռանալու քայլը, չի կրել զանգվածային բնույթ: Ժողովուրդը՝ հարուստ իշխանից մինչև ընչազուրկ գյուղացին, չի լքել իր հողը, չի մտածել

օտար անկյունների մասին: Ավանա մտածում ես՝ ինչ գնով է հատուցվել ու ձեռք բերվել մեր ժողովրդի գոյատևումը, ինչպիսի՞ մաքառումներ ու զրկանքներ... Ամենուր ու դարեր շարունակ:

Արդեն այն, որ այսօր կա, ունենք մեր պատմական տարածքի բոլոր ծայրերում սփռված էն քիչը՝ 700 բերդի գիտական նկարագրությունը, շատ բան է ասում: Դա նշանակում է, որ առնվազն այդ 700 բերդերն ստեղծող իշխանը, ավելացրած այդ նույն բերդերում հետագայում ծրարած նրանց ժառանգները, չեն մտածել, չեն փորձել հանգստություն և ապահովություն փնտրել օտար ափերում...»

Ազգ լինելու, ժողովուրդ լինելու, պետություն լինելու պայմանը դա է՝ կառուցած մնալ մայր հողին: Եթե անգամ այն քարակույտ է ծայրից ծայր...»:

**Գրիգոր ԳՈՒՐԳԱՐՅԱՆ (1922-2014)**  
**Ակադեմիկոս**

ՊԵՏՔ Է ԱՐԹՆԱՆԱԼ ԻՆՔՆԱՌՉՆԱՑՄԱՆ ԹՄԲԻՐԻՑ ԿԱՔԱՎԱԲԵՐՂՆ ԵՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅՈՒՆ. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽԵԿԻՐՆԵՐԻ ԼՈՒՍՄԱՆ ՃԱՆԱՊՈՐԷ

ՏԵՐ ՄԵՏՐՈՊ ՔԱՅՆԱ ԱՐԱՄՅԱՆ



ՄԱՍ Ա

Անհար է տրամաբանորեն պատկերացնել եւ քանակապես բնութագրել հայրենի հողի կորուստը, սրբությունների գերեզմարումը, նահատակների արյան աղաղակը: Գաղթը մեզ հետ կատարվածի հետ՝ նշանակում է դավաճանել ինքը քեզ եւ գնալ դեպի կատարյալ ինքնառչնացում: Կատարվածի ընկալման բարդությունը եւ մեր իրավիճակի իռացիոնալիզմը գալիս են ոչ միայն նրանից, որ մեր գիտակցությունը արդեապես ծանրությունից ճնշված ու վնասված է, այլեւ նրանից, որ մենք հետեւողականորեն փախչում ենք իրականությանն առերեսվելուց և, ըստ էության, քնած ենք: Ոչ միայն հիմն, այլեւ պատերազմի ողջ ընթացքում են դրանից առաջ: Իսկ կորուստները շարունակվում են, եւ վերջը չի երևում: Մեր թշնամին մեզ խոստանում է կատարյալ ոչնչացում, իսկ մենք դեռ չենք սթափվում եւ զգաստանում: Գիրավի կարծես այսօրվա մասին է ասում սբ. Գրիգոր Նարեկացին: «Անզգա անասունների պես մեռնում ենք եւ չենք զարհուրում, կորչում ենք եւ չենք զարմանում, թաղվում ենք եւ չենք խոնարհվում, տարագրվում ենք եւ չենք տազնապում, ապականվում ենք եւ չենք զղջում, մաշվում ենք եւ չենք հասկանում...»:

Այլընտրանք չունենք. պետք է ժամ առաջ արթնանալ ինքնառչնացման այս թմբիրից: Պետք է ոտքի կանգնել եւ ապրելու պատասխանատվություն ստանձնել: Սակայն հնարավոր լուծումների մասին խորհելուց առաջ պետք է առնվազն հասկանալ մեզ հետ կատարվածի հիմնական պատճառները եւ համապատասխան հետեւությունները: Ընդհանրապես արտաքին մարմնավոր աղետները ծնվում են ներքին բարոյական անկումներից ու հոգեւոր պաշտպանական համակարգերի բացակայությունից: Մենք՝ հայերս, առանձնանում ենք հոգեւորի նկատ-

մամբ հանցավոր անպատասխանատվությամբ: Գոգեւոր անվտանգության հիմնախնդիրներին նայել ենք մատնեղի արանքով եւ լայն բացել հայրենի տան դռները հոգեկործան ուժերի առաջ: Մեզ հետ խաղացել են, եւ մեզ դուր է եկել այդ խաղը, ու մենք նույնիսկ չենք էլ կասկածել, որ այդ ծրագրավորված խաղի նպատակը եղել է հայ ինքնության ոչնչացումը սեփական հայրենիքում: Գործի են դրվել համաշխարհային գլոբալիզմի աղանդավորական լաբորատորիաներում մշակված բոլոր գործիքները, ուղեղների վրացման բոլոր մեքենայությունները՝ հաշվի առնելով մեր արատները, սնահավատական հակումները եւ թուլությունները: Մեր ինքնության հեռանալները եւ սրբությունները թիրախավորվել են: Եկեղեցին, պետությունը, բանակը, կրթությունը ենթարկվել են ծանրագույն հարձակումների: Եվ ահա եկավ պատերազմը ու մեզ արդեն հանձնված գտավ. պարտությունը, կորուստները տրամաբանական հետեւանք էին հոգեւոր պատերազմում կրած պարտությունների: Երբ քեզանից խլում են գիտակցությունը, երբ կորցնում են հոգիդ, քեզ հետ կարող են անել ամեն ինչ, հայրենիքդ էլ կտաս, սրբություններդ էլ կկորցնես, զավակներիդ էլ կզոհաբերես:

Մեր հոգեւոր անկման կամ, ավելի ստույգ, խանգարման եւ մթազման ախտորոշումը հստակ է. մենք հոգեպես հիվանդ ենք: Եվ դատելով ախտանիշներից, որոնք են՝ իրականության կորուստը, չիմանավորված մեծամտությունը, որոշումներ կայացնելու անկարողությունը, հանցավոր անտարբերությունը, ծանր փուլում ենք գտնվում: Բժշկության հիմնական սկզբունքները հոգեւոր գիտակցության տիրույթում են: Այդ սկզբունքներից պետք է բխեցնել ազգային քաղաքականության, անվտանգության, տնտեսության, կրթության վերականգնման եւ զարգացման ծրագրերը: Զուրկեցանք հոգեւոր առանցք, բոլոր ծրագրերը դատապարտված են ձախողման, եւ այս հիվանդագին քառուրդ տանելու է մեզ կատարյալ կործանման: Ուրեմն այսօր բոլորիս տանող «ի՞նչ անել» եւ «ինչի՞ց սկսել» հարցերի պատասխանը մեկն է. պետք է սկսել հոգեւոր ինքնագիտակցության եւ պաշտպանության հիմնավոր համակարգերի կառուցումից: Այդ համակարգային լուծումների ճանապարհը կոչվում է քրիստոնեություն: Այստեղ խնդրում են մի փոքր լրջանալ եւ մի կողմ թողնել մեր մակերեսային պատկերացումները քրիստոնեության վերաբերյալ՝ ընդունելով, որ միգուցե

մենք բավականին երկար ժամանակ քաղաքակրթապես շեղվել ենք քրիստոնեությունից: Աշխարհիկացումն ավերիչ ազդեցություն է թողել մեզ վրա, մեր մտածողությունն ու մշակույթը դարձել են փորձադաշտ մաշված գաղափարների եւ մակերեսային տեսությունների: Կտրվելով իր հոգեղեն ակունքներից՝ մեր նոր շրջանի մշակույթը դարձել է խոր կրոնափիլիսոփայության եւ ներքին կատարելության իղեպետների հետ անհամատեղելի եւ ի վիճակի չի եղել ծնելու Դատուհանի կամ Դիկեոս, Ֆլորենսյի կամ Չեստերտոն: Մենք կարիք ունենք ընկալելու քրիստոնեությունը նրա առավել լայն՝ քաղաքակրթական, փիլիսոփայական, մշակութային, մտածելակերպային, արժեքային համատեքստում՝ իհարկե չմոռանալով այդ ամենը սնուցող նրա հիմնական աստվածաբանական եւ կրոնական միջուկը: Քրիստոնեությունը սոսկ մշակութային ժառանգություն կամ պատմական հիշողություն չէ, այլ Աստծո ազգ լինելու եւ Նրա ներկայության մեջ ապրելու ընտրություն, որ ընձեռում է համապարփակ աշխարհայացքային լուծումներ՝ ինքնուրու մեզ գտնելու, կազդուրվելու եւ հզորանալու: Առաջին քրիստոնյա ազգից սերած մեր այս սերունդը պատմական եւ համամարդկային պատասխանատվություն ունի վերստին բացահայտելու քրիստոնեությունը՝ գտնելու իր ինքնության հոգեւոր միջուկը, իր առաքելությունն այս աշխարհում եւ իր գոյության նպատակը: Իսկ ճանապարհ կամ ծրագրեր առաջարկողները, առավել եւս առաջնորդություն ստանձնելու հավակնորդները պետք է այս հիմնքային գիտակցության բարոյական կրիչներ լինեն, այլապես կդառնան հերթական մոլորեցնողները:

ՆՈՐ ՈՒՏՏ

Մենք սովոր ենք կառչել որոշակի հասկացություններից՝ առանց խորանալու դրանց էության մեջ: Երբեւէ մտածե՞լ ենք, որ այն, ինչ համարում ենք, թե ունենք, իրականում չունենք: Երբեւէ մտածե՞լ ենք, թե ազգ ինչ է: Երբեւէ մտածե՞լ ենք, որ ազգը քարացած ժառանգություն եւ գեներատիկա չէ, այլ սրբազան ուխտ, հոգեւոր գործություն եւ կենդանի բարոյականություն: Ազգի գոյության մասին մեր կարծիքները մեծավ մասամբ երեւակայական, զգացական, եթե չասեն՝ սնահավատական բնույթ ունեն: Մեր բոլոր պատկերացումները անկախության, պետության, բարոյականության, անվտանգության, հանրային շահի եւ ազգա-

յին այլ հիմնախնդիրների վերաբերյալ խախտում են եւ դարձել են զլխացավանք մեզ համար: Այդ պատճառով մենք չենք սիրում առերեսվել մեր ինքնությանը, փախչում ենք ինքնուրու մեզանից եւ դուրսն ենք տարրալուծվում այլ ազգերի մեջ: Մեզ պետք է դուրս գալ այս փակուղուց: Ավելի ստույգ հոգեւոր եզրաբանությամբ ձեւակերպենք մենք պետք է իմնովին դարձել գանձ՝ ազգովի ամրագրելով չարիքի մերժումը եւ բարիքի ընտրությունը: Դարձը ազգային ինքնագիտակցության նոր սինթեզի եւ մեր հոգու վերակենդանացման նախապայմանն է: Այնուհետեւ մենք պետք է հավատքի նոր ուխտ կնքենք եւ մաքրության պատասխանատվություն ստանձնենք Աստծո առաջ: Եվ եթե մեր դարձն անկեղծ լինի, ապա մենք հնարավորություն կունենանք վերստին ծնվելու որպես Աստծո ժողովուրդ եւ նրա առաքելությունն իրականացնելու այս աշխարհում: Սա կլինի մեր սերնդի խորհրդական մկրտության խորհուրդը: Այնուհետեւ ամրագրելով մեր հոգեւոր հիմքերը՝ մենք պետք է քայլ առ քայլ նորոգենք ու հզորացնենք մեր ազգային կյանքի հիմնական ոլորտները: Եվ նախ պետք է սկսել պետության նոր մոդելի մշակումից:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մեր երազած անկախ պետությունը հոգեվարքի մեջ է: Այն ի սկզբանե կառուցվել է սխալ հիմքերի վրա: Մենք պատրաստ չենք եղել ներքին եւ արտաքին փորձություններից: Մեր ինքնությանը համահունչ պետություն ունենալու բոլոր ճիգերը խեղդվել են կեղծ ժողովրդավարության քողի ներքո մերմուծված ապագային արժեքների որոգայթներում: Մենք մեքենաբար պետական կառույցներ ենք ստեղծել՝ առանց մտածելու բովանդակության մասին: Պետության գոյության համար անհրաժեշտ ազգային տեսլականի, գաղափարական մշակումների, մրցունակ ծրագրերի ստեղծման օջախներ կամ, այսպես կոչված, մտակենտրոններ չենք ձեւավորել: Չատուկենեկ կայացած այդպիսի երեւույթները արդյունք են ոչ թե պետական մտածողության, այլ անհատների ինքնաբերական համախմբման: Պետության վրա բարդել ենք անտանելի բեռներ, պետությանը վերագրել ենք փրկչական դեր, դարձրել ենք ամեն ինչի տեր՝ մեզ ազատելով տեր կանգնելու պատասխանատվությունից: Ձեւի եւ բովանդակության անհամապատասխանությունը չափազանց անհա-

տականացրել է հասարակական կյանքի առաջնորդության մոդելը, մեր մտածելակերպը դարձել է սեւ ու սպիտակ, որոնց արանքում գոյացել է գաղափարական անդուրդ: Այդ է պատճառը, որ մենք չենք սիրում գաղափարներ ու ծրագրեր եւ մեր դեկլարաներին կուրորեն ատում ենք կամ անվերջ պաշտում: Երկուսն էլ ծանր մեղքեր են, որոնք արդյունք են մեր ներքին սնահավատության եւ կռապաշտության:

Պետության կառուցման նոր տեսլականը եւ նրա կայացման սինթեզը մեր ազգային գոյության իրանայական են: Պետությունը բարոյական համակարգ է: Պետության մասին զրված կարեւորագույն ստեղծագործություններից մեկը՝ Պլատոնի «Պետությունը», ծայրից ծայր բարոյականության եւ առաքիությունների մասին է: Պետական գործիչը որոշակի առաքինության կրիչ է, եւ հասարակության գերխնդիրներից է այդպիսի գործիչների պատրաստման ինստիտուտների կայացումը: Պետության գործունեությունը պետք է հիմնված լինի համապատասխան մտակենտրոնների մշակումների վրա: Առանց գաղափարական եւ բարոյական էլիտաների պետությունը եւ ազգը դառնում են խաղալիք արտաքին ուժերի պարտադրած պոպուլիզմի եւ սեփական ժողովրդի հիմարության ձեռքին: Այս մտակենտրոնների կայացման համար անհրաժեշտ են բարձր բարոյական իղեպետներ եւ գործունեության չափանիշներ: Գալառանտությունից, միջակայությունից, մաշված գաղափարներից, ինքնահիացումից պետք է թոթափվել: Որոշիչ են լինելու մեր մրցունակ մարդկային երկուսի հայտնաբերումը, հաջողության պատմությունների համախմբումը եւ ընդհանրական շահի գիտակցության ձեւավորումը: Ռազմավարական ծրագրերի մշակումների, զարգացման ուղիների ընտրության եւ ճանապարհային քարտեզների նախագծման համար մենք կարիք ունենք հստակեցնելու հետեւյալ սկզբունքային հարցերի պատասխանները. ա) ո՞րն է մեր ինքնությունը, եւ ի՞նչ արժեքներ են մեզ միավորում, բ) ո՞րն է մեր գոյության իմաստը, եւ ի՞նչ առաքելություն ունենք մենք աշխարհում, գ) ո՞ր ենք զնում եւ ի՞նչ ճանապարհով պիտի հասնենք մեր նպատակակետին:

Շարունակելի

Տեր Մետրոպ քահանա Արամյանը «Այք» դպրոցի կրթական ծրագրի հեղինակն է եւ հոգաբարձուների խորհրդի հիմնադիր նախագահը: [mediamax.am](http://mediamax.am)



ՄԱՅՐԵՆԻ

ԱՆՊԱՐՏ ԴԱՅԵՆՔ ՄԵՐ ԼԵՉՈՒՆ` ՀԱՅԵՐԵՆԸ

Յուրաքանչյուր քաղաքակիրթ մարդու համար իր մայրենին ամենամահաբերականն ու գեղեցիկն է: Համաշխարհային լուսավոր մարդկանց համար միշտ ձգտում է եղել ու կա ծանոթանալ տարբեր օտար լեզուների, նրանց բարեհնչունությանն ուշադրություն դարձնել, փորձել խոսել այդ լեզուներով, ծանոթանալ նրանց լեզվաբանական դժվարություններին, լսել այդ լեզվի ներկայացուցիչների հնչարտաբերական յուրահատկությունները, զմայլվել հաճելիով... Կան նաև մասնագիտական մոտեցումներ, որոնցով ավելի խոր են գնահատվում այդպիսի հատկանիշները: Նույնիսկ մեկուկես հազարամյակ առաջ հայ առաջնակարգ մտավորական ու բազմաթիվ լեզուների տիրապետած Մեծն Եղիշեն, ուշադրություն դարձնելով այդպիսի երևույթներին, տվել է արտակարգ հետաքրքիր ընդհանրացում (նույնիսկ լեզուներ կան այդ խոսքում նշված, որոնք հիմա գոյություն չունեն, մեռյալ են): Եղիշենի չքնաղ ու բարոյագիտական իմաստուն ընդհանրացումն արդի հայերենով հետևյալն է (ներկայացնում ենք կրճատումներով).

Հունարեն լեզուն փափուկ է ու մեղմ, Հռոմեականը՝ հզոր ու կտրուկ, Հոներիենը՝ սպառնական, Ասորերենը՝ աղաչական, Պարսկերենը՝ պերճ, Ալաներենը՝ գեղեցկազարդ,, Գոթերենը՝ ծաղրական... Հայերենը՝ համեղական...

Արդի ժամանակաշրջանում քառասուն լեզուների տիրապետած էստոնացի անվանի լեզվաբան Պաուլ Արիստեին հարց են տվել, թե իր կարծիքով որ լեզուն է ամենագեղեցիկը: Հնչել է խելամիտ, շրջահայաց ու կատարյալ պատասխան. ՄԻՇՏ՝ ՄԱՅՐԵՆԻ:

Հայերենը ևս առաջադեմ ժողովուրդների լեզուների մեծ ժամանակակից մակարդակով դասակարգի հասած մեծահզոր լեզու է, ճկուն ու բազմաշերտ: Մեր շատ մեծություններ իրենց առնական կամ մեղմամրմունջ խոսքն են հղել այդ հրաշքի վերաբերյալ՝ ըստ իրենց արժևորման (այդ կապակցությամբ չափածո գործերի տարբեր հավաքածու գրքեր կան, անգամ արցախյան հրատարակություններ):

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս, Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին Պայծառ է նա՝ որպես մշտաբորբոք փարոս, Վառված հրով անշեջ դարերում հիմ... (Եղիշե Չարենց):

Հայոց լեզուն ամեն մակարդակով բավարարում է ցանկացած լեզվի բոլոր շերտերի նրբությունները ճշգրիտ փոխանցելուն, առաջնակարգ լեզուների քաղաքական բարդությունները բաղիյունելուն, հնարավոր պատճենումները դիպուկ կատարելուն: Անգամ տեղանուններից նրբությամբ կերտված օտար հասկացությունների բառակազմական հակիրճ հայտնագործումը փոխանցվել է ամենայն հաջողությամբ. տարածվել ու տարածվում է նաև անձնանունների վրա, ինչպես՝ ГОМДРАСИТЬ-հոմդրասիտացնել՝ Հոմդրասիտացություն, երկրի մեծն դարձնել, նրա օրը գցել (այդ երկիրն Ամերիկայի երկու մայր ցամաքների միջև եղած նեղ միացող հողակտորի վրա է ու նոր ինքնուրույնացած փոքր երկիր է):

Այս կապակցությամբ մեր լեզվում (գեղարվեստական խոսք) մեծ աշխատանք է կատարել Հ. Շիրազը (արարատվել, արագածվել, մասիսվել, մաշտոցվել, անդրանիկվել և այլն):

Դարեր անցան, օր լուսացավ բնօրրանում հայության,

Սարդարապատն ԱՎԱՐԱՅՐՎԵՏ, որ չմտնես էլ պատյան... (Հ. Շիրազ)

Հնագույն ժամանակներից սկսած, հայերենը լեզվի՝ ազգային սահմաններից դուրս՝ համամարդկային ներթափանցումներով համալրել, ճոխացրել է սեփականը, քայլել ժամանակին համընթաց: Հղկել է ունեցածը, ձերբազատվել անհարկի ներմուծումներից (փոխառություն՝ օտարաբանությունից): Հնարավոր չէ արհեստական արգելապատնեշներ դնել լեզվի դեմ,

բայց զարգացած, կիրթ լինելու համար նաև պետք չէ օտարամոլություն կիրառել: Օրինակ՝ կես դարից ավելի է, ինչ հայերենում փոխաբերություն (այլաբերություն) գիտաբան ազատ մուտք է գործել լեզվաբանության՝ ոճագիտության բնագավառ, անգամ դպրոցական ծրագրեր (լեզու, գրականություն): Բայց գրականագիտական բնագավառում դեռևս գործում են մետաֆոր, մետաֆորիզմ անհարկի օտարաբանությունները (տարիքով բարձր կոչում ունեցող գիտնականը դեռևս օտարն է ուսանողին մատուցում): Նոր, բայց սովորական գիտաբան գործածելը պետք է բնականոն ընթացք ստանա: Օրինակ՝ բազմակի տարադիր (տարադաս շարադասություն) անդամները պետք է մեր բառապաշար մտնեն (օրինակ՝ միևնույն գոյական գերադաս անդամին ստորադասված բազմակի որոշիչները կարող են տարադիր լինել նախադաս և ետադաս): Բացառ (բացակ, բառամիջոց) գիտաբան ամենաշատ տեսանելին է (բառերի միջև եղած տարածքը, հեռավորությունը), ուրեմն՝ այդ գիտաբանը պիտի տարրական դասարաններից մեզ համար սովորական լինի և այլն: Սովորական բեղ բառը թուրքերենից եկած է, որին մի քանի հարյուրամյակ է, ինչ ծանոթ ենք, բայց մինչ այդ ունեինք ընչացք (ունչ (քիթ)+աց+ք): Կարճ հնչման պատճառով լայն կիրառություն է ստացել օտարը: Անգամ տղամարդ, այրական անձ բառերը դուրս մղվեցին, ու բեղավոր հասկացությունը մուտք գործեց, բայց Ստալինին այդպես կոչելու համար նախորդ դարի 50-ականներից անհարգի բառ ճանաչվեց, իսկ բեղը մնաց: Այդպես է նաև «Նախշուն բաջի»-ն, որը «Նախշուն աքեր»-ի պարզաբանումն է իբր (բաջի բաղադրիչը թուրքերեն թույր բառն է, որն արցախյան բարբառում ավելի հասկանալի է թվացել, քան հնչյունափոխված ա+քեր-ն է (այ+թույր), և թուրքացումն առաջնային էր դարձել):

Այդպես էլ հիմա ռուսական բառերն են կիրառվում՝ տյոտյա (тетя)՝ ծոճյա, դյադյա (дядя)՝ ծյաճյա, փիչ, ստոլ (աթոռ և սեղան), դուխտակա (ջեռոց), սպասիբո, պակա, դրագնիտ անել և այլն:

Պետք է զերծ մնալ օտարաբանություններից և մասնակցել մայրենիի անաղարտ պահպանման սուրբ գործին, պետք է զերծ մնալ արևելյան ճոխաբանության գայթակղությունից: Չպետք է օրինական-ը լեզվա-ով փոխարինվի, լրագրողը՝ ժուռնալիստ-ով, գործընկերը՝ կոլեգա-ով, պատկերամուտը՝ սկաներ-ով, կրիչը՝ ֆլեշկա-ով, տպիչը՝ պրինտերով, համաբուժարանը՝ պոլիկլինիկա-ով և այլն: Մայրենիի պահպանման պետական պաշտոնակատարները պետք է համբերությամբ ու անդուլ ջանասիրությամբ մատուցեն բառերի շարքերը (թերթ, գրույց-հանդիպումներ, ասուլիսներ, եթեր)՝ առանց վիրավորելու շրջապատի մարդկանց: Չմոռանանք, որ Մեծն Մաշտոցը՝ ՀԱՅՈՑ ԱՍՏՎԾԸ (Հ. Շիրազ), երբեմն քարկոծվել է, բայց դիմակայել ու հայ ժողովրդին մատուցել է առաջադիմականը՝ հնչյունագրությունը (տառը), փառաբանը՝ հայեցի լինելու լավագույն միջոցներից մեկը՝ սրբացված այբուբենը: Մեր լեզուն մեր խիղճն է, մեր էությունը, մեր ինքնությունը, մեր սրբությունը: Թող յուրաքանչյուր հայի բերանում լինի բարեկիրթ ու օրինակելի հայոց լեզուն: Այս կապակցությամբ արժե հիշել ռուս գիտնական Կ. Պաուստովսկու իմաստուն խոսքը. «Մայրենի լեզվի նկատմամբ անտարբեր մարդը վայրենի է...»:

Արժե հիշել Մեծն Թումանյանի բարեկիրթ խոսքը, որ անգամ դպրոցական դասագրքում է մատուցվում. «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի խոշոր դրոշմը, պատմության հեռավոր անցյալի կախարհական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ  
Բ. գ. թ. դոցենտ

ՇԻՐԱԶԻ ՄԱՍԻՆ ՀՈՒՇԵՐԻՑ

ԹԵ ԻՆՉՊԵՏ ՇԻՐԱԶԸ ՀՐԱԺԱՐՎԵՑ ԼԵՆԻՆԻ ՀՔԱՆՇԱՆԻՑ ԵՎ ՄԵՐԺԵՑ ԿՐԵՍԼԻ ԱՌԱՋԱՐԿԸ՝ ՀԱՆՈՒՆ «ՂԱՐԱՔԱՂԻ ՈՂԲԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ



«Ղարաքաղի ողբ»-ի համար Հովհաննես Շիրազը 1975թ. հրաժարվեց խորհրդային երկրի բարձրագույն պարգևից՝ Լենինի շքանշանից:

...ՀԿԿ Կենտկոմի միջնորդ-պատվիրակը Հ. Շիրազի իրական մտերիմներից էր՝ ակամավոր գրականագետ Սուրեն Աղաբաբյանը:

Մի լավ խնդիր լուծած մարդու ուրախությամբ մի օր նա, Շիրազի տուն մտնելով, ասաց.

- Կենտկոմից լավ լուր են բերել, Շիրազ, Մոսկվան համաձայն է քեզ Լենինի շքանշանով պարգևատրել:

Կռահելով՝ բանաստեղծը տեղնուտեղը հարցրեց.  
- Ինձնի՞ց ինչ կուզեն:  
- Քեզ համար մեծ բան չէ,- ասաց գրականագետը,- դու ավելի լավերն ունես, ժողովրդի մեջ քո անունով այնքա՛ն բանաստեղծություններ են թափառում, որոնց հեղինակը դու չես. ընդամենը մի տող, թեկուզ մի երկրորդական թերթում գրիր, թե իբր լավ չես հիշում, որ գրած լինես:  
- Բայց ո՞րը, Սուրեն,- զարմացավ բանաստեղծը:  
- Էն, էլի, «Ղարաքաղի ողբը», որ մեծ աղմուկ է հանել սփյուռքում, տպվել է, և ամեն դահլիճում ու հավաքում արտասանում են, և աղբյուրաբանները բողբոջել են Մոսկվային:  
- Բայց դա, Սուրեն, հաստատ են եմ գրել, որովհետև ուրիշը չէր կարող գրել, և հենց Մոսկվայի համար եմ գրել, իմ խոսքին ինչո՞ւ կարևորություն չեն տա: Այնինչ ժողովուրդն անմիջապես կլանեց այն ու որպես շքանշան՝ ոչ թե կրծքին, այլ իր սրտի մեջ կպահե: Գրկողներից ասա, որ Շիրազն իր բանաստեղծությունն է համարում իր շքանշանը՝ «Ղարաքաղի ողբը»:

«ԷՔԱՊՐՈՍ»-Ը

Շիրազը գիշերը չէր քնել: Սպիտակեցրած պատի վրա կարմիր մատիտով ոչ թե գրել, այլ դաջել էր վեցտողանոց անմոռաց էքսպրոմտը, որը շուտով պիտի մտներ համաշխարհային գրականության ոսկե ֆոնդ.

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես խուճցիք վայրագ,  
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ,  
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

Առավոտյան պատին դաջածն արագ գրի է առնում, խնամքով դնում ծոցագրպանը և շտապում խմբագրություն: Տեղ չհասած՝ հանդիպում է գրող Նաիրի Զարյանին, որը մեծ հետաքրքրությամբ լսում է բանաստեղծությունը և Շիրազին առաջարկում հենց այդ էլ կարդալ նույն օրը ֆիլիստինյայի դահլիճում կայանալիք միջոցառմանը:

Պատերազմի սկիզբն էր: Մարդիկ արյունահեղ կռվի էին գնում: Այդ էր պատճառը, որ դահլիճում ծափահարություններ չհնչեցին: Միայն լսելի էին բանաստեղծի անունը վանկարկող ծայրերը. «Շի-րազ, Շի-րազ»:

Ժամանակ անց նրան իր մոտ է կանչում Ավետիք Իսահակյանը:

Շիրազը տեղավորվում է Վարպետի կողքին, թախտի վրա: Իսահակյանը գրկում է Շիրազի ուսը և, փոքր-ինչ հուզված, բանաստեղծի ճակատից խնամքով ետ է տանում անհամդիստ մազափունջը, համբուրում, ապա բանաստեղծական տողերը ոչ թե արտասանում, այլ կարդում է գրույցի պես:

- Այո՛, մենք կմնանք մեր լեռների պես, նրանք կգնան վայրի հողմերի մեծն:  
- Գիտե՞ս, տղաս,- շարունակում է Վարպետը,- հայերս ռազմի շատ երգեր ունենք: Բայց դու նոր բան ասացիր, իմացիր, Շիրազ, դու հիմա գտնվում ես ռազմաճակատում՝ դիրքերի վրա: Այդպես է:

Երգը անվանել են էքսպրոմտ, բայց սա պոեմ է իր էությամբ, ունի սկիզբ, վերջ, եզրահանգում: Եվ՝ ընդամենը վեց տող: Սա ևս նորույթ է: Մի խոսքով, լավ բան են ստեղծել:

Իսկ երբ Իսահակյանն իմանում է, որ բանաստեղծությունը Շիրազը գրել է գիշերը, պատի վրա, կարմիր, մեծ-մեծ տառերով, հուզմունքից թե ուրախությունից սկսում է հայրաբար խառնշոտրել բանաստեղծի մազերը.

- Դու՛, իմ Հովհաննես Շիրազ՝ ջան, Շիրազ... Գիտցիր, տղա՛ս, քո «էքսպրոմտ»-ը կմնա, քանի աշխարհում ուրիշի ունեցվածքին ու երկրներին աչք դնող թալանչիներ կան: Իզուր չէ, որ այս երգը գրել է հայրդրին, ում թալանեցին, զավթեցին..., բայց նա կա՛, կլինի՛..

ՄՇԱԿՈՒՅՑ

Առն ԲԱՐԱԶԱՆՅԱՆ-100

ՀԱՅԱԶԳԻ, ՀԱՅԵՑԻ, ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ



Հունվարի 22-ին լրացավ Առն Բաբաջանյանի 100-ամյակը: Թեպետ արդեն 38 տարի է, ինչ տաղանդավոր դաշնակահարն ու կոմպոզիտորը մեզ հետ չէ, սակայն նրա ստեղծագործությունը եղել է մնում է հայ ազգային երաժշտարվեստի փայլուն դրսևորումներից մեկը: Նրա ստեղծագործական հարուստ ժառանգությունը ներառում է երգեր, գործիքային կատարումներ, սիմֆոնիկ երաժշտություն: Նա ստեղծագործել է տարբեր ոճերով՝ դասական, փոփ, ջազ: «Ինչ էլ գրեմ՝ ստացվում է հայեցի», - այսպիսին է կոմպոզիտորի խորհրդանշական խոստովանությունը:

Առն Բաբաջանյանը ծնվել է Երևանում: Նրա նախնիների մեջ, ինչպես և ընտանիքում երաժիշտներ չեն եղել, բայց մաթեմատիկայի ուսուցիչ հայրը ոչ միայն երաժշտության մեծ սիրահար էր, այլև քամանչա, շվի ու ֆիսհարմոն էր նվագում: «Հատկապես հոգեպարար էր նրա շվին, իսկ «Դիչ յաման»-ը լսել էր պետք», - հուզմունքով հետագայում հիշում էր կոմպոզիտորը: Ճակատագրի բերմամբ դեռևս մանկապարտեզում նա առաջին անգամ հանդիպեց իսկական կոմպոզիտորի. նա միշտ սիրով է հիշել այդ հանդիպումը: «Մի անգամ եկավ մի այցելու: Այդ մարդը խնդրեց մեզ երգել, որպեսզի իմանա, թե ով լավ ծայր ունի: Ես նույնպես երգեցի և ռիթմի տակ ծափ տվեցի: Այդ մարդը լսեց ու ասաց, որ պիտի զբաղվեմ երաժշտությամբ: Ավելի ուշ իմացա, որ այդ մարդը Արամ Խաչատրյանն էր»:

8 տարեկանում ընդունվել է Երևանի կոմպոզիտորիային կից երաժշտական դպրոցը, իսկ 9 տարեկանում գրել իր առաջին՝ «Պիոներական քայլերգ» ստեղծագործությունը, որը 1932թ. Ե. Չարենցի որոշմամբ հրատարակվել է և ճանաչում բերել փոքրիկ Առնոյին: Այնուհետև ավարտել է Երևանի և Մոսկվայի կոմպոզիտորիային: Նա մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և այդ տարիներին գրել հայրենասիրական գործեր՝ «Վաղարշապատի պարը», «Հերոսական բալլադ», կոմպոզիտոր ջութակի և դաշնամուրի համար: Հատկանշական է, որ հետպատերազմյան տարիներին Մոսկվայի Հայ մշակույթի տան երաժշտական ստուդիայում սկիզբը դրվեց մի ընկերության ու համագործակցության Առն Բաբաջանյանի, Ալ. Հարությունյանի, Ադամ Խուրդյանի և Ղազարոս Սարյանի, որը պիտի անվանվեր «Խայկական հզոր խմբակ», որի հոգին ու խիղճը, Բաբաջանյանի բնորոշմամբ, է. Միրզոյանն էր:

Մեծ է Բաբաջանյանի դերը հայկական և խորհրդային էստրադայի, ինչպես նաև դասական երաժշտության զարգացման գործում: Նա գրել է նաև երաժշտություն ֆիլմերի համար՝ «Առաջին սիրո երգը», «Հարսնացուն հյուսիսից», «Երջանկության մեխանիկա», «Ամպրոպի արահետով» և այլն: Նա մի շարք սիրված երգերի հեղինակ է՝ «Երևան», «Առաջին սիրո երգը», «Կամուրջներ», «Քեզ հետ», «Ես սպասում եմ քեզ»: Խորհրդային երկրի բազմաթիվ կոլեկտիվների ու մեներգիչների երգացանկում կոմպոզիտորի գործերը նկատելի տեղ գրավեցին: Հատկապես արգասաբեր էր կոմպոզիտորի համագործակցությունը Ռոբերտ Ռոժդեստվենսկու, Անդրեյ Կոզմենսկու և Եվգենի Եվտուշենկոյի հետ, որի արդյունքում ծնվեցին խորհրդային էստրադայի գոհարներ՝ "Королева красоты", "Голубая тайга", "Улыбнись", "Будь со мной", "В нежданный час", "Встреча", "Воспоминание", "Позови меня", "Загадай желание", "Благодарю тебя", "Свадьба", "Не спеши", "Чертво колесо", "Твои следы", "Год любви", "Москва-река", "Верни мне музыку":

Հատկանշեմք՝ ինչ ժանրի էլ դիմեր Բաբաջանյանը, կարողանում էր գտնել դեպի ունկնդրի սիրտը տանող ուղին: Երաժշտագետների կարծիքով՝ նա շարունակում էր Ա.Խաչատրյանի ստեղծագործական ավանդույթները, իսկ նրա «Էլեգիա»-ն, «Նոկտյուրն»-ը, «Հայկական ռապսոդիա»-ն, «Ֆանտազիա»-ն և շատ այլ գործեր վաղուց հավերժ անցաթուղք են ստացել:

Ծանրակշիռ է կոմպոզիտորի ներդրումը գործիքային ջազի, երաժշտական-թատերական ժանրերի բնագավառում ևս: Երգերով ու կինոերաժշտությամբ Ա. Բաբաջանյանը մեծապես նպաստեց խորհրդային և հայկական էստրադային երաժշտության զարգացմանը: «Ո՞րն է Ձեր ամենասիրելի երգը» հարցին Ա. Բաբաջանյանը պատասխանել է. «Այն դեռևս չեմ գրել»: Այդպես էլ 1983թ. նոյեմբերի 11-ին հեռացավ կյանքից երգի անզուգական վարպետը՝ դեռևս չստեղծած իր ամենասիրելի երգը: Սակայն նրա երգերը սիրեց ու երգեց ժողովուրդը. երգեց հայերեն ու ռուսերեն, Կալինինգրադից մինչև Վլադիվոստոկ, Մոսկվայից՝ Երևան... Նրա երգերը կատարեցին խորհրդային և ռուսական էստրադային երաժշտության աստղերը, ռուսական ժողովրդական երգի վարպետները, օպերային երգիչները... Իսկ «Ազգ փառապանծ»-ը Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ, մասետրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ հնչում է և կինոյի որպես հայ ժողովրդի հավերժության ձոն»,- կոմպոզիտորի 90-ամյակին ասել է արվեստագիտության դոկտոր Ա. Ասատրյանը:

«Ստեղծագործությունը միշտ պետք է հուզի ունկնդիրն: Երաժշտության ճշմարտայնության առաջին անհրաժեշտ պայմանը և չափանիշը հուզականությունն է: Այն պետք է հուզի քեզ, ցնցի, մտնի սիրտդ և ոչ թե գարնացնի»,- ասել է Առն Բաբաջանյանը:

Այս խոսքերը բնորոշ են նրա բոլոր ստեղծագործություններին:

Ս. ՄԻՆՈՆՅԱՆ

Սեփ. լրատվություն

ՀԱՄԱՏԵՂ ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒ

Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի անվան հանրապետական գրադարանում ռուս խաղաղապահ ուժերի հետ համատեղ անցկացվեց գրական-երաժշտական երեկո՝ «Մենք խաղաղություն ենք ուզում» վերտառությամբ: Միջոցառումը բացեց և վարեց գրադարանի տնօրեն Անահիտ Բաղդյանը:

հայտությունը փոքր-ինչ ձևափոխվելով՝ ասաց. «Մենք գալիս ենք ոչ մանկությունից, գուրությունը, որ ստացել ենք մեր պապերից, փոխանցեմք մեր սերունդներին»:



Խաղաղապահ ուժերի փոխգնդապետ Իգոր Յակուշևը հրամանատարության և իր անունից ողջունեց մասնակիցներին և դարաբաղյան հողին մաղթեց բաղձալի խաղաղություն: «Խոսել հայ և ռուս ժողովուրդների մշակութային ընդհանրության, փոխազդեցությունների մասին, երկար կտևի: Մենք դա չենք անի: Պարզապես կլսենք հիասքանչ երգեր ու բանաստեղծություններ: Չկա մի հայ, որ չիմանա և չսիրի Պուշկինին, Լերմոնտովին, և չկա մի ռուս, որ լսած չլինի Արամ Խաչատրյանի, Առն Բաբաջանյանի և մյուս մեծերի մասին ու չսիրի նրանց: Շատ կարևոր և հանելի երևույթ է, որ այդպիսի համագործակցություն մեր երկու ժողովուրդների միջև եղել է դարերով և ապագայում էլ կշարունակվի», - ասաց նա:

հայտությունը փոքր-ինչ ձևափոխվելով՝ ասաց. «Մենք գալիս ենք ոչ մանկությունից, գուրությունը, որ ստացել ենք մեր պապերից, փոխանցեմք մեր սերունդներին»:

մենք գալիս ենք պատերազմից, քանզի այսօր այստեղ նստած են իմ աշակերտները, որոնք այն սերնդի երեխաներն են, որ արդեն երեք պատերազմ են տեսել, իսկ իրենք՝ երկու: Այսօր այստեղ արտասանվող բանաստեղծությունները կլինեն պատերազմի մասին, բայց բոլորի լեյտմոտիվն այս է՝ մենք խաղաղություն ենք ուզում, որովհետև անհամատեղելի են «երեխաներ» և «պատերազմ հասկացությունները»: Եվ դիմելով խաղաղապահներին՝ ասաց, որ թեք նրանք այստեղ են եկել, ուրեմն պետք է սիրեն մեր ժողովրդին: Արցախցին այն ժողովուրդը չէ, որը պատերազմ է ուզում, մենք խաղաղություն ենք ուզում. «Սիրեք մեր ժողովրդին և հավատացեք, որ մենք ապրում ենք մեր հողում և ուզում ենք, որ այն ժառանգությունը, որ ստացել ենք մեր պապերից, փոխանցեմք մեր սերունդներին»:

Ռուսերեն և հայերեն լեզուներով հնչող երգերն ու բանաստեղծությունները հաջորդում էին միմյանց: Գրադարանի փոքրիկ ընթերցողներ Անահիտ Ծատրյանը և Լիկա Խաչատրյանն արտասանեցին Հովհ. Թումանյանի «Այս ի՞նչ սրտամաշ տխրություն է քեզ պատել, հայրենի գեղեցիկ աշխարհ» և Վ. Մկրտչյանի «Կոչ գինվորին» բանաստեղծությունները: Երեկոյին հնչեցին Գեղամ Սարյանի, Բուլատ Օկուջավայի, Վլադիմիր Վիտցկու և այլոց բանաստեղծությունները: Արցախի պետական կամերային երգչախմբի մեներգիչ Ստեփան Ջհանգիրյանի կատարմամբ և փոխգնդապետ Իգոր



Յակուշևի նվագակցությամբ հնչեցին Հայրենական պատերազմի տարիների հանրապետական Լիլիթ Շահրամանյանը կատարած երգերը:

Վոկալիստ Լիլիթ Շահրամանյանը կատարեց երգերը:

ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԻ ՀԻՇՏԱՍԿԻՆ

Արցախի մշակութային կյանքում կարևոր իրադարձություն էր Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցում հունվարի 24-ին կայացած համերգը՝ նվիրված տաղանդավոր կոմպոզիտոր և դաշնակահար, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Առն Բաբաջանյանի ծննդյան 100-ամյակին: Ներկա էին ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, մայրաքաղաքի մշակութային կոլեկտիվների, ՌԴ խաղաղապահ ուժերի, երաժշտասեր հասարակության ներկայացուցիչներ, որոնց հոգուն հարազատ ու սիրելի է համաշխարհային փառքի հասած մեր մեծ հայրենակցի ստեղծագործությունը:

Համերգը վարողը ընդգծեց, որ Առն Բաբաջանյանի երաժշտությունը մի կողմից ազգային ու անկրկնելի է, նրանում արտացոլված է հայկական կոլորիտը, մյուս կողմից ինտերնացիոնալ է, քանի որ հասկանալի ու հարազատ է տարբեր ազգերին: Իր ողջույնի խոսքում ՌԴ հունանիտար կենտրոնի սպան ասաց, որ Բաբաջանյանը վաղուց դարձել է համաշխարհային մշակույթի մաս: Նա իրենով արտացոլում է հայ և ռուս ժողովուրդների մշակութային ամուր բարեկամությունը:

Համերգին Բաբաջանյանի անկրկնելի ստեղծագործությունների կատարումներով հանդես եկան Ստեփանակերտի երաժշտական դպրոցի լավագույն ուժերի ներկայացուցիչները: Աշխարհահռչակ մեր մեծ հայրենակցի կենսահաստատ երաժշտությունը հնչեց ակորդեոնիստների և դաշնակահարների, սաքսոֆոնիստների և վոկալիստների կատարմամբ: Համերգային ծրագրի վերջին համարը՝ «Чертво колесо» երգը, կատարվեց համատեղ՝ Արցախի պետական երգչախմբի մեներգիչ Ստեփան Ջհանգիրյանի և Հունանիտար կենտրոնի սպայի կողմից: Հանդիսականներն ստացած դրական մեծ լիցքերը փոխատուցեցին երկարատև ծափերով:

Այդ համերգը դարձավ ևս մեկ քայլ արցախցիների ոգու և տրամադրության բարձրացման ճանապարհին:

Սեփ. լրատվություն

Ս. ՊԱՐԻԻՆՅԱՆ

ԽՈՆԱՐՆ ԵՐՈՍՆԵՐ

ԷՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՍԱՀՄԱՆ Է, ՎԻՇՏԸ՝ ԽՈՐ



Պատերազմն ավարտվել է, բայց կյանքն էլ առաջվանը չէ: Մեր շրջապատից, ցավոք, բացակայում են այնպիսի տղաներ, որոնց ներկայությունը ոգեւորում էր շատերին, որոնց քաջալերանքի խոսքերի կարիքը միշտ կունենանք, որոնց մասնագիտական ծիրքը կմնա մեր հուշերում...

Ոգեւորող, օգնող, լավ ընկեր ու լավ աշխատող էր Ռոբերտ Բորիսի Մնացականյանը: Ստեփանակերտում նրան ճանաչում էին գրեթե բոլորը: Ովքեր գեթ մեկ անգամ այցելել են «Մենուս» կամ «Նազիմալ» ռեստորանները, չեն կարող չհիշել բարեհամբույր Ռոբերտին: Ծնվել է 1996թ. օգոստոսի 29-ին: Ավարտել է Ստեփանակերտի հ. 3 դպրոցը: Սովորել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ֆիզկուլտու-

րալի բաժնում: 2016-ին ժամկետային զինծառայող էր, երբ իր մասնակցությունն ունեցավ Արփիյան պատերազմին: Լավ ծառայության համար արժանացել էր շնորհակալագրի: Աշխատում էր «Նազիմալ» ռեստորանում, «Մենուս» հյուրանոցի ռեստորանի բաժնում՝ հետագա փայլուն կարիերան սկսելով մատուցողից, այնուհետև բարմենից՝ դառնալով մենեջեր: Վայելում էր ընկերների եւ գործընկերների սերն ու հարգանքը: Լավ հասկանում էր դիզայնի բաժնում գործից: Այդ ոլորտում նախաձեռնող էր եւ հաճախակի այնպիսի լուծումներ էր առաջարկում, որոնք իսկույն պետք է ի կատար ածվեին: Ինքն էլ հենց իրականացնում էր իր փայլուն գաղափարները: Սիրալիր էր վերաբերվում ցանկացած հաճախորդի հետ, նվիրված էր իր գործին: Ջերմ էր ընկերների, բարեկամների հետ: Սրտաբաց ու ազնիվ տղան դեռ կյանքի մեծ ուղի ուներ անցնելու եւ իրականացնելու շատ երազանքներ, որոնք այդպես էլ չիրականացան:

Ռոբերտի մասին մեզ պատմեց նրա մորաքրոջ տղան՝ Արմեն Պետրոսյանը, որը նրա համար եղբայր ու ընկեր էր: Ռոբերտն ընտանիքի միակ զավակն էր, ապրում էր մոր հետ: Ինչպես պատմում են,

Ռոբերտն արտերկրում կարիերան շարունակելու լավ առաջարկներ էր ստացել, բայց չէր գնում: Մի կողմից չէր ուզում մեծակ թողնել վատառողջ մորը, մյուս կողմից էլ հայրենասիրության զգացումը չէր թողնում լքել հայրենիքը:

2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված չարաբաստիկ պատերազմին կամավորագրվեց նաեւ Ռոբերտ Մնացականյանը: Եղբայրը հայտնում է, որ, ելնելով ընտանեկան պայմաններից, կարող էր

կապաց: Նրա գաղափարներից էր նաեւ բուսական թեյեր Արցախ ներմուծելը: Որոշել էին միասին սեփական գործ սկսել՝ բուսական թեյերի ներմուծում եւ սնկի աճեցման գործ: Իր լավ գաղափարներով ուզում էր սիրելի հայրենիք Արցախը փոխել դեպի լավ ու ավելի լավը: Ավաղ, Հարութը կորցրեց իր լավ ընկերոջն ու համախոհ գործընկերոջը: Ռոբերտի հայրենասիրության մասին պատմեց նաեւ Հարութը: Երբ պատերազմի օրերին նրան ասում էին, որ գոնե մի օրով գնա տուն, մնա մոր կողքին, նա պատասխանում էր, որ մինչեւ վերջ մնալու է եւ կռվելու է:

Ինչպես աշխատանքային գործունեության մեջ էր անթերի, այնպես էլ ռազմի դաշտում գերազանց կատարում էր իր առջեւ դրված առաջադրանքը: Մարտական ընկերները պատմում են, որ ոչ մի քայլ հետ չէր նահանջում, քաջալերում էր

իր ներկայությամբ ու ոգեւորում մարտընկերներին: Շատերը ոգեւորվում էին նրա անվախությամբ, երբ կողքին էին կանգնում, նրա մարտական ոգին միշտ բարձր էր: Յուրահատուկ խիզախությամբ մնաց մինչեւ վերջ, դիմակայեց մինչեւ պատերազմի վերջին օրը...



չզնալ պատերազմ, բայց Ռոբերտն այդպիսին չէր: Նա այն տղաներից էր, ովքեր հայրենիքը վեր են դասում իրենց կյանքից:

Ռոբերտի ընկեր Հարութ Դավթյանը, որը նրա համար աշխատանքային ուղորտում համագործակցում էր հետը, պատմում է, որ Ռոբերտը լավ ընկեր էր, պարտաճանաչ, նպատա-

Նոյեմբերի 9-ի գիշերը Մարտունու պաշտպանական մարտերի ժամանակ բեկորային մահացու վիրավորման հետեւանքով հերոսաբար ընկավ Ռոբերտ Մնացականյանը՝ մոր, հարազատների, ընկերների ու պարզապես իրեն ճանաչողների սրտերում թողնելով անբացատրելի ու անտանելի ցավի եւ ափսոսանքի զգացում: Գործընկերները համարում են, որ իրենց ընտանիքից կորցրել են որդուն: Անչափ դժվար է պատկերացնել կյանքն առանց Ռոբերտի: Ուզում են իրականացնել նրա գաղափարները, ցավոք, առանց նրա: Հաճախորդները խորը ցավով են տեղեկանում նրա բացակայության մասին:

Հարազատների հպարտությունն անսահման է, վիշտը՝ խոր, իսկ կարող խեղդում է: Մոր՝ Էլմիրա Մնացականյանի համար միակ որդին արեւի շող էր, իր հպարտությունն ու իր մասնիկը: Մոր համար շատ դժվար է առանց որդու: Կորստի հետ հարմարվելն անհնար է: Ռոբերտը միշտ կատարում էր մոր ցանկությունները եւ իր խոստումները: Իսկ մայրը միայն ուզում էր, որ որդին ողջ ու առողջ լինի եւ վերադառնա իր մոտ: Ցավոք, նա գոհվեց: Գնահատենք մեր հերոսների սխրանքը, փորձենք անել առավել մեր երկիրը լավ դարձնելու եւ նրանց գործը շարունակելու համար:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Մարզական

ԻՍԿ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ ՏԱՆԵՂ ԿԱՐԱՏԵ

Համապատասխանում է, արդյոք, կարատեն աղջիկներին: Չնայած բազմիցս անդրադարձել ենք մարտարվեստներով պարապելու համար սեռային խտրականություն չընդունելու թեմային, այնուամենայնիվ, տարածված կարծիքը, թե մարտարվեստն աղջկա բան չէ, դեռ շարունակում է շրջանառվել հանրության մեջ: Մինչդեռ Արցախում թերեւս պատկերներ ուրիշ է: Արցախից աղջիկների հոգեկերտվածքին բնորոշ մարտականությունը նկատելի է Ավանդական կարատեի գեղեցիկ աշխարհի խմբերում, որտեղ մարզիչ Տիգրան Գեւորգյանի մոտ ավանդական կարատեի պարապմունքների են հաճախում շուրջ 6 աղջիկներ:

Ակնհայտ է, որ ֆիզիկական լավ վիճակը դրական է ազդում առողջության վրա: Կարելի է, որ երեխաները վաղ հասակից ընտելանան ֆիզիկական կուլտուրային: Այս առումով կարատեն գրավում է նրանով, որ աղջիկները, ծեռք բերելով մարտական հմտություններ, պահպանում են մարմնի արտաքին կանացիությունը: Կարատեիստուհիները չունեն գերմարզված մկաններ, նրանք «երկաթյա փայտահատիչի» տպավորություն չեն թողնում: Ընդհանուր առմամբ մարտարվեստները, մասնավորապես կարատեն, զարգացնում են ոչ միայն մտ, այլեւ նկունություն, շարժողականություն: Իսկ դրանք, անկասկած, աղջիկների առողջության համար կարելիոր հատկանիշներ են:

Մարզիչ Տիգրան Գեւորգյանի խոսքով՝ ավանդական կարատեում խտրականություն չկա տղաների ու աղջիկների պարապմունքների միջև: Բայց դեռահասության տարիքում աղջիկների մոտ նկատվում են որոշ բարդություններ: Ինչպես հայտնի է, մարտարվեստի պարապմունքները նպաստում են բարդությունների հաղթահարմանը, իսկ հոգեբանությունն ու փիլիսոփայությունը, որ ավանդական կարատեի մարտարվեստի հիմքն են կազմում, անծի մոտ միանշանակ նպաստում են ինքն իրեն ճանաչելուն, ինքնաբացահայտմանը, ակտիվ ու աշխույժ լինելուն, բարդությունների հաղթահարմանը, հավասարակշռված լինելուն: Մարզիչ մանրամասնելով՝ աղջիկներն ավելի պարտաճանաչ են տղաներից: Իսկ հայ աղջիկների մոտ առանձնանշվող բարձր կարգավիճակն ու համեստության շնորհիվ ավելի հեշտ է յուրացվում ավանդական կարատեում:

րատեն: Մատուցվող տեխնիկական վերահսկվող է, մարզիչն անընդհատ ուշադրության կենտրոնում է պահում վնասվածքավտանգ հնարները: Աղջիկները, ինչպես նաեւ տղաները սովորում են կառավարել իրենց, դառնում են ներդաշնակ:

Կարատեն կանանց ձգում է ոչ քիչ, քան տղամարդկանց: Աղջիկները հաջողությամբ մասնակցում են մրցաշարերին, ցուցադրական ելույթներին: Եվ դա հետաքրքիր է ոչ միայն կարատեիստների, այլեւ կողքից նայողների համար: Նազանքն ու կանացիությունն անհավատալիորեն համադրվում են



շարժումների ուժգնության եւ արագության հետ:

Ի՞նչ սկզբունքներով են ծնողները որոշում երեխային կարատեի պարապմունքների տանել: Եթե երեխան տղա է, կարծես թե ամեն ինչ պարզ ու օրինաչափ է: Իսկ աղջիկներին տանել՝ կարատե... Կարատեն շատ դրական կողմեր ունի: Պակաս կարելու չէ նաեւ միջազգային փորձը: Օրինակ, ճապոնիայում մենամարտեր պարապող գրեթե բոլոր խմբերում աղջիկների ու տղաների քանակը հավասար է: Հարցը միայն նրանում չէ, որ Արեւելքում մենամարտերը մշակույթի մաս են կազմում, այլ նրանում նաեւ, որ այդ մարտարվեստները շատ լավ միջոց են երեխայի մոտ հոգեւոր եւ ֆիզիկական հնարավորություններ դաստիարակելու համար:

Կարատեի խմբակը գերազանց տարբերակ է նրանց համար, ովքեր ուզում են իրենց երեխաների համար ապահովել բազմակողմանի զարգացում:

Ծնողները, իրենց աղջիկ երեխային տանելով կարատեի խմբակ, կարող են հաշվի առնել միանգամայն դրական կողմեր. դա վատախոթություն է, որ դուստրը կարող է պաշտպանել ինքն իրեն, լինել ֆիզիկապես առողջ, ինչպես նաեւ կարատեն ոչ միայն շեշտադրված ֆիզիկական պատրաստություն է, այլեւ մարտարվեստ, որն առանձնանում է իր փիլիսոփայությամբ եւ անծի ներդաշնակության ձգտումով: Այդ կերպ կարատեն աղջիկների համար մի ամբողջ աշխարհ է, որը նպաստում է ապագա կնոջ բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացմանը: Բայց դրական կողմերի մասին խոսենք մանրամասն: Չէ՞ որ արտաքինից հեշտ թվացողի տակ թաքնված է մեծածավալ աշխատանք: Բնականաբար, մարզումները հեշտ չեն լինի: Կարատեի հիմքում մրցակցի հետ մոտիկ կոնտակտ թույլ չտալու, նրան արագորեն վնասազերծելու ձգտումն է: Աղջիկներն աշխատում են այնպիսի հարվածների վրա, որոնք կարող են առավելագույն կարճ ժամանակում կասեցնել մրցակցին: Սա առաջին դրական կողմն է՝ ծեռք բերել ինքնապաշտպանության հմտություններ: Պետք է նշել նաեւ, որ կարատեն այն մարտարվեստն է, որով հավերժ չտարվելը դժվար է: Այո, ցանկալի արդյունքի

եւ արդյունավետության հասնելու համար աղջկանից կպահանջվեն մեծ ջանքեր: Հավանաբար, հենց դրա համար են ասում, թե կարատեն ծեւավորում է բնավորության հատուկ գիծ: Այս առումով էլ կարատեի օգտակարությունն այն է, որ աղջկա մոտ զարգանում են նպատակասլացություն եւ ինքնավստահություն: Կարատեն տալիս է ոչ միայն պաշտպանողական եւ հարձակողական հմտություններ, ցանկացած պայմաններում դրանք կիրառելու կարողություններ, այլեւ ցանկացած իրադրությունում չհանձնվելու հատկություն: Իսկ դա, համաձայնեք, կարելու է:

Խոսենք հնարավոր բացասական կողմերի մասին: Նախքան աղջիկ երեխային կարատեի խմբակ տանելը պետք է հաշվի առնել, որ այն բավականին վնասվածքավտանգ մարտական արվեստ է: Ընկնումների վրա աշխատելու հնարավոր են կոտրվածքներն եւ այլ վնասվածքներ: Կարատե պարապող մարզիկների

մոտ հաճախ են վնասվում հողերը: Դրա համար անհրաժեշտ է ճշգրիտ գնահատել երեխայի ուժն ու հնարավորությունը: Եթե կան հողերի, սրտի, զարկերակային ճնշման, ողնաշարի նեվրոլոգիական հիվանդություններ, պետք է դրա մասին անպայման հայտնել ապագա մարզչին:

Կարատեում անընդունելի է տղաների ու աղջիկների միջեւ տարբաժանումը: Անկախ սեռային պատկանելությունից, երեխաները մարզադասիլիծում հիանալի գտնում են իրենց եւ միմյանց: Երեխային հատուկ խանդավառությամբ են անմիջականությամբ, որը հատկապես վառ արտահայտվում է մասնապարտական տարիքում, նրանք հաճույքով ընկղմվում են պարապմունքների մեջ եւ միասին գնում են մարտարվեստների ճանաչման ուղիով: 8-10 տարեկանում տղաների ու աղջիկների պարապմունքների միջեւ էական տարբերություն չի նկատվում, բավականին հաճախ մարզիչները համատեղ պարապմունք են անցկացնում: Իսկ 10-12 տարեկանում, երբ արդեն կարատեում սկսվում է մրցութային փուլը, սկսվում է նաեւ բաժանումը տղաների ու աղջիկների մրցութների միջեւ: Դա հիմնականում կուսիտներին է վերաբերում, քանի որ մանկապատանեկան մրցաշարերում կատան հաճախ կատարում են տղաներն ու աղջիկները միասին: Մինչդեռ տեխնիկական վարպետության մակարդակի բարձրացման հետ երեխաների եւ պատանիների մեջ շատ մարզիչներ խառը մենամարտեր են ուսուցանում թե՛ որպես թեստ, թե՛ որպես մրցաշարերի նախապատրաստում:

Եվս մեկ անգամ նշենք, որ կարատեն շատ լավ հնարավորություն է աղջիկների ներդաշնակ զարգացման համար: Ծնողները դա հասկանում են եւ իրենց աղջիկ երեխաներին տանում են կարատեի պարապմունքներին: Դրա շնորհիվ մենք ունենք մեր հայրենիքը ներկայացնող հայտնի չեմպիոն կարատեիստուհիներ: Անկասկած, նրանց կիստեսեն մոր սերնդի տաղանդաշատ աղջիկ մարզիկներ, եւ նրանց ճանապարհն էլ է սկսվելու նրանից, որ ծնողները կհնարեն խմբակներ, ակումբներ, որտեղ իրենց դուստրերը կունենան հաճելի եւ օգտակար զբաղմունք: Չէ՞ որ կարատեն հարմար է բոլորին՝ անկախ սեռից:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

ՁԵՂ ԴԵՏ ԵՎ ԱՌԱՆՑ ՁԵՂ

ՊԱՏԵՐԱԳՄԻՑ ԱՌԱՋ ԵՎ ԴԵՏՈ

Շնորհավորանք

ԿՈՉՈՒՄԸ՝ ՄԱՐԴ ԵՎ ԼԱՎ ՈՒՄՈՒՅԻՉ



Ուսուցիչ չեն դառնում, ուսուցիչ ծնվում են և ամբողջովին նվիրվում սիրած աշխատանքին՝ դաստիարակելով և ուսուցանելով բազում սերունդների, թրծելով նրանց մատաղ հոգիները:

Կ Ր Ք Ո Ւ Ք Յ Ա Ն դարբնոցի անխոնջ մշակներից է Էլզա Գալստյանը: Նա իր կյանքի 33 տարիները նվիրել է արցախյան մանուկների կրթության նվիրական գործին: Մարդ մեծատառով, որն իր ազնվությամբ, բարությանը, համբերատարությամբ, մեծահոգությամբ ապրում և արարում է հայրենի բնաշխարհում: Նրա սաներն այսօր աշխատում են տարբեր բնագավառներում, շատերն իրենց ծառայությունն են մատուցել Արցախի պաշտպանությանը:

Էլզա Գալստյանը մանկավարժական գործին զուգահեռ անտրտուն կատարել և կատարում է նաև հասարակական աշխատանքներ: Վայելում է շրջապատի հարգանքն ու սերը:

Սաներն ու ծնողները պարծանքով են խոսում նրա մասին: Կյանքում փորձում են նմանվել մարդ-մանկավարժ Գալստյանին:

Սիրելի՛ գործընկեր, սրտանց շնորհավորում ենք Ձեր 60-ամյա հոբելյանը, ցանկանում Ձեր ընտանիքին ամենայն բարիք, բարգավաճում, նոր եռանդ և ուժ հետագա նախաձեռնություններում: Թող Աստված խաղաղություն պարգևի մեր աշխարհին, և Դուք շարունակեք Ձեր եռանդուն գործունեությունը:

Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

«ԼՈՒՍԱՐԱՐ»

2021 թվականի բաժանորդագրություն

Պատերազմը ցավ ու վիշտ բերելուց զատ՝ նաև փոխել է մեր կյանքի բնականոն ռիթմը: Անցյալն ու ներկան հիմա մեզ նույն դեմքով են ներկայանում, իսկ ապագան մշուշոտ է: Ո՛ւր է տանում ճամփան, որ ուրիշներն են, ցավոք, բացել մեզ համար: Հիմա հարցերն ավելի շատ են, քան պատասխանները, որոնք ոչ թե պիտի ուրիշից ստանանք, այլ հենց ինքներս գտնենք: Գտնենք ու քննարկենք, վերլուծենք ու համարենք, բանավիճենք ու կիսվենք... Եվ կյանքն աստիճանաբար կվերադառնա իր հունի մեջ, հավատացե՛ք:

«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը եղել և մնում է հանրապետության բոլոր մանկավարժների վստահելի գրուցակիցը: Համախմբված կրկին մեր սիրելի թերթի շուրջ:

Տարեկան բաժանորդագինը դարձյալ նույնն է՝ 3000 դրամ:

Սպասում ենք բոլորիդ նորանոր հանդիպումների հույսով:

Պատերազմը իրաբխ նման ճեղքել, երկինք է շարտել բոլորիս նվիրական երազանքները: Այս խառնաշփոթի մեջ մոլորվել է անգամ Աստված, չգիտի որին հասնի ու օգնի, որին մխիթարի... Մեր կյանքը բաժանվել է երկու տարբեր, հակադիր բևեռների՝ պատերազմից առաջ և պատերազմից հետո: Մի կողմում ազատ ու անկախ Արցախն է՝ իր հազարավոր հաղթանակած հայրերի և կանանց, մյուս կողմում՝ ցավից քարացած, կողոպտված, սեփական հայրենիքում իրեն խորթ ու օտար զգացող, հաղթանակած հայրերի արժանապատիվ, բայց դավաճանված ու խեղճացած զավակները: Մերումը, որը պարզապես ուզում էր ապրել, սիրել ու ժպտալ:

Պատերազմից առաջ մեր սիրելի մարդիկ մեզ հետ էին, պատերազմից հետո ապրում ենք նրանց մասին հիշողություններով ու հույսով, որ մի օր նրանք անպայման տուն են դառնալու, և ծանրացած

օրը վերստին ապրել-արարելու կենսատու շնչով է լցվելու: «Ինքնախաբեությամբ ենք զբաղված ազգովի», - ականջիս շշմեցում է Մեծն Լուսինը: - Ի՞նչ: - Մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպես կմնա: - Իսկ Աստված: Մի՞թե նա չի կարողանում չարիքի դեմն առնել, մարդակեր գազան մարդու խիղճն արթնացնել: - Չարության ծովը եկել սպառնում է խժռել մեղսագործ մարդկային ցեղը, ջնջել նրա պատմությունը, իսկ Աստված չարության մոլեգին ծովում փրկության խարխուլներ է փորձում գտնել: Փրկության խարխուլներ է փորձում գտնել, փորձում է գտնել...

Յեռվից եկող ձայնը հետզհետե մարում է անորոշության գրկում:

Սրտիս արագ բաբախից բացվում են աչքերս, հիշում են իր տան բակում գլխատված գործընկերոջս՝ նարեկագետ, աստվածաբան Վահրամ Լալայանին, հիշում են ազնիվ, հայրենասեր, ընկե-

րասեր ու համեստ դասընկերոջս՝ Տիգրանին: Նա իր անձնավիրությամբ ու համարձակությամբ հասցրել է մարտի դաշտում փրկել բազում կյանքեր, իսկ ճակատագիրն անհայտ է մնում օրեր, շաբաթներ ու ամիսներ շարունակ: Հիշում են եղբորս՝ Արթուրին, որը նախընտրեց Արցախյան առաջին պատերազմի մասնակից իր նվիրյալ հոր և հորեղբոր գործը պատվով շարունակել ու երկնային թագավորությունը պատվել իր թանկ ներկայությամբ: Հիշում են որդու՝ Ալյոշայի դարձին սպասող մոր ու տատի արցունքոտ աչքերը... Տեսնում են Արցախյան առաջին պատերազմի մասնակից Ջավեն հորեղբորը, որը որդու ոսկորներն է հուսահատ փնտրում Հադրութի անտառներում: Տարիներ առաջ ինձ հոգեհարազատ դարձած, կյանքի փորձով իմաստնացած, Արցախյան առաջին պատերազմի տարիներին բազում փորձություններ հաղթահարած, բայց վշտի առաջ խեղճացած

իմ լավագույն բարեկամի՝ Ժաննա Բեգլարյանի բառերն են ականջներիս մեջ զրնգում. «Ինձ հերոսի կոչում պետք չէ, ես իմ որդուն եմ ուզում... Ի՞նչ պատասխան պիտի տամ թոռնիկներս...»:

Այս շաբթը շարունակվում ու ձգվում է անցյալից մինչև ներկա՝ երջանիկ ու ապահով անցյալից մինչև հեղհեղուկ ու ցավոտ ներկա, թվում է՝ շաբթը ձգվում է մինչև հավերժություն...

Խավարի մեջ աղոթք են շշմեցում, փորձում ցրել համատարած մութը, որն սպառնում է անգամ օրը ցերեկով...

Պատերազմից առաջ համատարած լույս էր, պատերազմից հետո՝ համատարած խավար:

Պատերազմը ժայթքեց անժամանակ և ողջ-ողջ կուլ տվեց մի ամբողջ սերունդի երազանք...

Նանար ՍԻՄՈՆՅԱՆ «Գրիգոր Նարեկացի» համալսարան

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ԹԱՏՐՈՆԸ ԱՐՅԱՆՈՒՄ ՀԱՆԴԵՍ ԿՎԱ ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐՈՎ



Սոս Սարգսյանի անվան «Համազգային» թատրոնը տարեվերջին Արցախ էր այցելել՝ բերելով «Սպիտակաձյունիկն ու 7 թզուկները» ներկայացումը: Թատրոնի դերասանական խումբը հանդես է եկել ճարտարում, Մարտակերտում, Ասկերանում, ապա 3 օր՝ Ստեփանակերտում:

«Արմենպրես»-ի մամուլի սրահում հրավիրված ասուլիսում Սոս Սարգսյանի անվան «Համազգային» թատրոնի գեղարվեստական ղեկավար Նարինե Գրիգորյանը նշեց, որ տպավորություններն աննկարագրելի են:

«Երբեք այդքան իմաստավորված չեն զգացել մասնագիտությունս, որքան Արցախ կատարած վերջին այցելության ընթացքում: Մեր շուրջըլորը կան երեխաներ, որոնք պետք է չզգան այն, ինչ տեղի է ունեցել, որոնք պետք է ուրախանան: Դու ես այն մասնագիտության տեր մարդը, որ կարող է երեխային ուրախացնել հեքիաթով: Տպավորություններն աննկարագրելի են: Սկզբում խաղացիմք ճարտարում: Այնտեղ ոչ բոլոր օրերին հոսանք կար, այնպի-

սի օր էինք այնտեղ հասել, երբ էլեկտրամատակարարում չկար, սակայն շատ արագ պայմաններ ստեղծվեցին, և ամբողջ դահլիճը հավաքվեց», - ասաց Նարինե Գրիգորյանը:

Թատրոնի գեղարվեստական ղեկավարն Արցախում անցկացրած օրերը բնութագրում է այսպես. փոխադարձ ուժի, փոխադարձ երջանկության փոխանցում: Դերասաններն ուրախ էին, որ արցախցիները կան, վերադարձել են տուն, պինդ կառչած են հայրենի հողին: Արցախցիներն էլ երջանիկ էին, որ դերասաններ են եկել, իսկ դա նշանակում է, որ կյանքը շարունակվում է:

«Շատ ուժ հավաքած ենք եկել, դա մեզ համար վերելքի մի նոր շրջան եղավ: Այդ զգացողությամբ պետք է կարողանանք վարակել նրանց, ովքեր սկսել են հիասթափվել վիրավոր Հայրենիքի գիտակցումից», - ասաց նա:

Արցախից ստացած տպավորություններն այնքան ջերմ են ու դրական, որ ստիպեցին տարվա ծրագրերում պարտադիր ներառել Արցախ այցելությունը: Տարեկազմին Արցախ կատարած այցելության ընթացքում հանդիպում են ունեցել Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հետ և պայմանավորվել, որ հաճախ են այնտեղ լինելու ներկայացումներով:

«Համազգային» թատրոնը պատրաստվում է տարվա ընթացքում հանդես գալ նոր ներկայացումներով:

ՄԵՇԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՑ

Չարլի Չապլինը ապրել է 88 տարի:

Նա մեզ է թողել 4 պատգամ.

- 1) Ոչինչ հավերժ չէ այս աշխարհում, անգամ մեր խնդիրները:
2) Ես սիրում եմ քայլել անձրևի տակ, քանի որ ոչ ոք չի կարող տեսնել իմ արցունքները:
3) Կյանքում ամենակորած օրը այն օրն է, երբ մենք չենք ծիծաղում:
4) Աշխարհի 6 լավագույն բժիշկներն են՝

- 1. Արևը,
2. Հանգիստը,
3. Մարգարեքը,
4. Դիտան,
5. Ինքնահարգանքը,
6. Ընկերները:

Պահպանեք դրանք ձեր կյանքի բոլոր փուլերում և վայելեք առողջ կյանքը:

Եթե դուք տեսնեք Լուսինը, կտեսնեք Աստծո գեղեցկությունը:

Եթե դուք տեսնեք Արևը, կտեսնեք Աստծո ուժը:

Եթե դուք տեսնեք հայելի, կտեսնեք Աստծո լավագույն ստեղծագործությունը:

Կյանքը ճանփորդություն է, այնպես որ, ապրե՛ք այսօր: Վաղը կարող է և չլինել:

ԼՈՒՍԱՐԱՐ | Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ | Ստեփանակերտ, Գ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info | Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրազրույցում վարելու պարտավորություն չի ստանձնում: | Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 13.02.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: